

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Ռուսաստան Տագնապի Առջեւ

Անցնող շաբաթավերջին աշխարհի ուշադրութիւնը սեւեռած էր Ռուսաստանի վրայ, ուր տեղի ունեցան անսպասելի իրադարձութիւններ, որոնք եկան աւելի եւս թուլացնելու Քրեմլինի դիրքերը՝ ներքին ու արտաքին աշխարհին առջեւ:

Տարի մը ու կէս առաջ Ռուսաստան գործեց իր պատմութեան վերջին տասնամեակներու աշխարհաքաղաքական մեծագոյն սխալը՝ ներխուժելով Ուքրաինա ու չհասնելով իր նպատակադրած ծրագիրներու իրականացման: Ուքրաինոյ մէջ տեղի ունեցող ռազմական գործողութիւններուն ընթացքին Ռուսաստան ներգրաւեց «Ուէկնըր» կոչուող վարձկաններու բանակ մը, որուն ղեկավարն էր նախագահ Վլատիմիր Փութինի ամենէն մօտ գործակիցներէն մին՝ Եւկէնի Պրիկոժինը, որ Ռուսաստանէն ներս ու դուրս նշանաւոր դարձաւ ընկերային ցանցերու միջոցաւ իր ելոյթներով, որոնց մէջ ան կը քննադատէր երկրի ռազմական ղեկավարութիւնը՝ պատերազմը ճիշտ ձեւով չվարելու եւ Փութինին սխալ տեղեկութիւններ գեկուցելու մէջ: Այս ելոյթները կը հանդիմանէին, նկատելի առնելով որ, «Ուէկնըրի» զինեալները կը կռուէին ճակատի ամենէն թե՛ կտրուկ վրայ՝ հասնելով որոշ յաջողութիւններու, թէեւ ի գին մեծ թիւով զոհերու:

Պրիկոժին իր խումբ մը զինեալներով Ուքրաինոյ իր կեդրոնատեղիէն անցնելով սահմանի Ռուսական կողմը՝ առանց մեծ դիմադրութեան գրաւեց Տոնի Ռոստով քաղաքը ու հոն գտնուող զօրանոցը, ուրկէ կը ղեկավարուին նաեւ Ռուսաստանի ռազմական գործողութիւնները: Պրիկոժին յայտարարեց որ, ի թիրախը Փութինի իշխանութիւնը չէ, այլ՝ ցոյց տալ ռազմական ղեկավարութեան անկարողութիւնը:

«Ուէկնըր» զինեալները դարձեալ առանց դիմադրութեան հասան Մոսկուայէն 100 քիլոմէթր հեռավորութեան վրայ, ու «քաղաքացիական պատերազմի» ուրուականը սկսաւ երեւնալ Մոսկուայի երկնականարին վրայ: Սակայն 24 ժամ չանցած Պրիկոժին ետ դարձ կատարելով իր գործերով միասին հեռացաւ Տոնի Ռոստովէն ու այժմ ինք կը գտնուի Պելոռուսիա, որուն նախագահ Լուկաշենքոն եղաւ անց միջնորդը, որ յաջողեցաւ համոզել Պրիկոժին վերջ տալու իր շարժումին: Ամերիկացի քաղաքական շրջանակներու կարծիքով ապս-

Շարունակուեցաւ Ազգային ժողովի ՔՆՆԻՅ Յանձնաժողովի Նիստը՝ Վարչապետին Մասնակցութեամբ

Յունիս 27-ին, վարչապետ Նիկոլ Փաշինեանի մասնակցութեամբ շարունակուեցաւ ՀՀ Ազգային ժողովի 2020 թուականի 44-օրեայ պատերազմի հանգամանքները ուսումնասիրող Քննիչ Յանձնաժողովի նիստը:

Վարչապետ Փաշինեան ցանկութիւն յայտնած էր, որ Քննիչ Յանձնաժողովին մէջ իր հարցաքննութիւնը ըլլայ հրապարակային: Յանձնաժողովի մինչ այժմ կայացած մնացեալ բոլոր նիստերը՝ հրաւիրուած ներկայ եւ նախկին պաշտօնեաներու, զինուորականներու մասնակցութեամբ, եղած էին դռնփակ:

Ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիւ Ունեմ» խմբակցութիւնները յայտարարած էին, որ պիտի չմասնակցին վարչապետին մասնակցութեամբ տեղի ունեցող Քննիչ Յանձնաժողովի նիստին:

Փաշինեան Քննիչ Յանձնաժողովի ուղիղ հեռարձակուած նիստին ընթացքին պատասխանելով պատգամաւորներու հարցումներուն՝ անդրադարձաւ բանակցային գործընթացին մէջ ստեղծուած իրա-



ՀՀ Ազգային ժողովի ՔՆՆԻՅ Յանձնաժողովի նիստը՝ վարչապետի մասնակցութեամբ

վիճակին, պատերազմէն խուսափելու տեսական հնարաւորութեան, հետախուզական տուեալներու ճշգրտութեան ու բանակի մարտունակութեան:

Վարչապետը ըսաւ, որ 2019 թուականին բանակցային գործընթացը աշխատանքային մակարդա-

կով ինք կ'անուանէր պատերազմական փոխակրիչ, քանի որ կը գործէր հետեւեալ տրամաբանութիւնը՝ «խաղաղութեամբ տուր այն, ինչ ուզում եմ, այլապէս ես այդ նոյնը կը ստանամ պատերազմով»: Եւ,

Ատրպէյճանի Կառավարութիւնը Իրաւունք Զունի Ընելու Ինչ որ Կ'ուզէ. Թինի Քօքս

Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի նախագահ Թինի Քօքս Պաքուին կոչ ըրած է հաւատարիմ մնալու ստանձնած պարտաւորութիւններուն եւ բանալու Լաչինի միջանցքը, որպէսզի հնարաւոր ըլլայ Լեռնային Ղարաբաղի բնակչութեան օգնութիւն հասցնել:

«Բոլորը կ'ընդունին, որ Լեռնային Ղարաբաղը Ատրպէյճանի մաս է, սակայն այդ Ատրպէյճանի կառավարութեան իրաւունք չի տար այդ մարդոց հետ ընելու ինչ որ կ'ուզէ: Լաչինի միջանցքին արգելափակումը լուրջ աղէտի պատճառ կրնայ դառնալ Լեռնային Ղարաբաղի մէջ ապրող հազարաւոր մարդոց համար, որոնք կախուած են Հայաստանի հետ միջանցքէն: Այն փակուած է, եւ այդ Ատրպէյճանի ստանձնած պարտաւորութիւններու խախտում է: Վեհաժողովը խստօրէն կոչ կ'ընէ Ատրպէյճանին հետեւելու ստանձնած պարտաւորութիւններուն, վերաբանալու միջանցքը, որպէսզի հնարաւոր ըլլայ օգնութիւն հասցնել Լեռնային Ղարաբաղ», ըսած է ԵՆԽՎ նախագահը:

Միւս կողմէ, ԵՆԽՎ-ն Ընդունեց «Լաչինի միջանցքով Ազատ Անվտանգ Մուտքի Ապահովումը» Բանաձեւը

Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովը Հինգշաբթի երեկոյեան կայացած լիազուգում նիստի ժամանակ, շուրջ երկու ժամ տեւած քննարկումէ



ԵՆԽՎ նախագահ Թինի Քօքս

յետոյ, հաստատեց Լաչինի միջանցքին ստեղծուած կացութեան վերաբերող բանաձեւը:

48 կողմ, 16 դէմ քուէներու յարաբերակցութեամբ Վեհաժողովը արձանագրեց, որ Լաչինի միջանցքով մարդոց եւ բեռներու ազատ ու անվտանգ տեղաշարժը խոչընդոտուած է, նաեւ Պաքուին կոչ ըրաւ անյապաղ կատարելու Մարդու իրաւունքներու Եւրոպական Դատարանին կողմէ նախորդ տարուան Դեկտեմբեր 22-ին հրապարակուած վճիռը:

Ի հեճուկս Ատրպէյճանի պնդումներուն՝ ԵՆԽՎ բանաձեւը յստակ կ'արձանագրէ, որ Լաչինի միջանցքով չկայ ազատ եւ անվտանգ տեղաշարժ:

Ներկայացուցիչներու Տան Անդամը Առաջարկեց ԼՂ Ուղարկել Գոնկրէսի Պատուիրակութիւն

ԱՄՆ Գոնկրէսին մէջ կայացած «Պաշտպանութիւն Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին» թեմաչով լսումներու ժամանակ ԱՄՆ Հանրապետական Կուսակցութեան անդամ Սեմ Պրոտնայեքը անդրադարձած է Լեռնային Ղարաբաղի մէջ հայերու կարգավիճակին՝ նշելով, որ այնտեղ ապրող հայերը քրիստոնէայ բնակչութիւն են, որուն կը սպառնայ տարածաշրջանէն արտաքուստ: «Ատրպէյճանը կը պատրաստուի փակելու տարածքը՝ բնակչութեան ուղղակի ստիպելով հեռանալ եւ չվերադառնալ, անոնք պիտի ցրուին աշխարհով մէկ եւ պիտի ստեղծեն սփիւռքի այլ օճախներ: Կը պատրաստուինք արդեօք մենք թոյլ տալու եւս մէկ քրիստոնէայ բնակչութեան ըլլալ վտարուած իրենց հայրենիքէն: Այս ամէնը կ'իրականացուի ամերիկեան կամ իսրայէլեան զինամթերքի օգնութեամբ, որուն կը տիրապետեն ատրպէյճանցիները: Կը կարծեմ, որ եթէ Ատրպէյճանը չվերադառնէ շրջափակումը, ապա նախագահ Պաշտպանի վարչակազմը պէտք է գործողութեան մէջ դնէ 907-րդ ուղղումը», ըսած է գոնկրէսականը:

Ան նաեւ առաջարկեց Լեռնային Ղարաբաղ ուղարկել Գոնկրէսի

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ատրպեյճանը Ձգտում է Բանակցութիւնները Տանել Այնպիսի Դուրսով, Որից Շահելու է Միայն Ինքը

ՄԱՆՈՒԷԼ ՍԱՐԳՍԵԱՆ

Արդէն յայտնի է, որ Հայաստանի եւ Ատրպեյճանի արտգործնախարարներ Արարատ Միրզոյեանն ու Ջեյհուն Բայրամովը մեկնել են Ուաշինգթոն՝ ամերիկեան կողմի միջնորդութեամբ մասնակցելու հայ-ատրպեյճանական յարաբերութիւնների կարգաւորման բանակցային գործընթացի հերթական փուլին:

Թէեւ Հայաստանի եւ Ատրպեյճանի իշխանութիւնները ցանկանում են, որ խաղաղութեան պայմանագիրը հնարաւորինս շուտ կնքուի, այդուհանդերձ, դեռ կան չլուծուած խնդիրներ: «Արմենփրես»-ի թղթակիրի հետ զրոյցում այս տեսակէտը կիսեցին քաղաքագետներ Արեգ Քոչինեանն ու Հրանտ Միքայէլեանը:

«ԱՄՆ-ն ունի մեծ ցանկութիւն եւ կարողութիւններ՝ նպաստելու հայ-ատրպեյճանական յարաբերութիւնների կարգաւորմանը, բայց եւ այնպէս, դա չի նշանակում, թէ ԱՄՆ-ն մեր փոխարէն լուծելու է բոլոր խնդիրները կամ պարտաւոր է դրանք լուծել: Հարցն այն է, թէ Հայաստանը որքանով է արդիւնաւէտ աշխատում ամերիկեան կողմի հետ եւ որքանով կարող են ԱՄՆ-ի ցանկութիւններն ու կարողութիւնները ծառայել յարաբերութիւնների կարգաւորմանը», - նկատեց Արեգ Քոչինեանը:

Նրա կարծիքով՝ ուաշինգթոնեան հարթակը բաւականին հեռանկարային ձեւաչափ է: Սեղանին կայ դրուած փաստաթղթի նախագիծ, որի մի մասը համաձայնեցուած է, թէեւ միջազգային յարաբերութիւններում ընդունուած է սակայն՝ քանի դեռ ամէն ինչ համաձայնեցուած չէ, ուրեմն ոչինչ համաձայնեցուած չէ:

«Սկզբունքային տարաձայնութիւններ կան հիմնական չորս փաթեթների շուրջ: Դրանք են Արցախի հայութեան իրաւունքների եւ անվտանգութեան ապահովումը, Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ սահմանագծման ու սահմանագատ-

ման գործընթացի հիմքը, հաղորդակցութիւնների ապաշրջափակումը եւ բուն փաստաթղթի երաշխաւորի առկայութիւնը: Մէկ հանդիպմամբ, իհարկէ, հնարաւոր չէ լուծել բոլոր հարցերը, բայց եթէ ուաշինգթոնեան բանակցութիւնների ժամանակ նշուած փաթեթներին որեւէ մէկով զբաւեցուի առաջընթաց եւ դիրքորոշումները մոտարկուեն, ապա հանդիպումը կարելի կը լինի համարել արդիւնաւէտ եւ յաջողուած: Տուեալ փուլում խիստ կարեւոր է հիմնարար հարցերն իրարից տարանջատել եւ կեդրոնացուած բանակցութիւններ վարել առանձին վերջրած խնդիրների շուրջ», - ասաց Քոչինեանը: Քաղաքագետի համոզմամբ՝ հարցերի լուծման ընդհանուր կամ փաթեթային տրամաբանութիւնը փակուղային է: Շատ աւելի դժուար է փաթեթային տարբերակի շուրջ

Հարցերի լուծման ընդհանուր կամ փաթեթային տրամաբանութիւնը փակուղային է: Շատ աւելի դժուար է փաթեթային տարբերակի շուրջ գալ համաձայնութեան, քան պայմանաւորուածութիւններ ձեռք բերել փուլ առ փուլ բանակցային տարբերակի

գալ համաձայնութեան, քան պայմանաւորուածութիւններ ձեռք բերել փուլ առ փուլ բանակցային տարբերակի դէպքում, հետեւաբար գործընթացին պէտք է մօտենալ պրագմատիկ տեսանկիւնից: Քոչինեանի կարծիքով՝ որքան շատ հարցերի շուրջ ձեռք բերուեն համաձայնութիւններ, այնքան աւելի կը մեծանայ ընդհանուր պայմանագրի ստորագրման հաւանականութիւնը:

Քաղաքագետ Հրանտ Միքայէլեանն էլ իր հերթին անդրադառնալով Միրզոյեան-Բայրամով հանդիպման հետ կապուած ակնկալիքներին՝ նշեց, որ Հայաստանի, Ատրպեյճանի ու ԱՄՆ-ի իշխանութիւնների դիրքորոշումները համընկնում են այն հարցի շուրջ, որպէսզի հնարաւորինս շուտ հակամարտող կողմերի միջեւ կնքուի խաղաղութեան պայմանագիր:


«Բայց միւս կողմից էլ Ատրպեյճանի մօտ առկայ է բանակցային գործընթացը գուտ բովանդակային առումով փոխելու ցանկութիւն՝ Հայաստանից աւելի շատ զիջումներ կորզելու նպատակով: Նման պայմաններում հաւանականութիւնը շատ մեծ է, որ խաղաղութեան վերջնական պայմանագիր այս փուլում չի ստորագրուի: Սկզբում բանակցութիւններն ընթանում էին Արցախի կարգավիճակի շուրջ, դրանից յետոյ՝ հիմնական խնդիրը դարձաւ կայունութեան ապահովումը, իսկ այժմ Ատրպեյճանը յայտարարում է, որ արցախեան հիմնախնդիր ընդհանրապէս գոյութիւն չունի, մինչդեռ ՀՀ իշխանութիւնը պնդում է, որ արցախահայութեանը տրուեն անվտանգութեան եւ իրաւունքների պաշտպանութեան անբեկանելի երաշխիքներ: Այդ մասին յայտա-

րող հարցերն ուղղակի մերժում են Ատրպեյճանի կողմից:

«Յաւօք սրտի, միջազգային կառույցների կողմից Ատրպեյճանին ուղղուած կոչերը նրան չեն բերի կառուցողական դաշտ, որովհետեւ պաշտօնական Պաքուն արդէն իսկ անտեսել է ՄԱԿ-ի միջազգային դատարանի որոշումն ու մնացել անպատիժ, թէեւ այդ դատարանի լիազօրութիւնները տարածուած են նաեւ Ատրպեյճանի վրայ: Վերջինս առհասարակ հարցն այսպէս է դնում. եթէ մեզ յաջողուած է ուժով իրականացնել էթնիկ գոման քաղաքականութիւն եւ ոչ-ոք չի միջամտում, ապա պէտք է շարունակել այդ քաղաքականութիւնը, իսկ յետոյ աշխատել հետեւանքների հետ», - նշեց Միքայէլեանը:

Քաղաքագետ յիշեցրեց, որ ՌԴ-ն, ԱՄՆ-ն ու Եւրոպական կառույցներն արդէն իսկ հանդէս են եկել Լաչինի միջանցքն անյապաղ բացելու պահանջով: Կայ նաեւ միջազգային դատական ատեանի համապատասխան որոշումը: Օրեր առաջ ԵՆԽՎ-ն ընդունեց բանաձեւ, բայց, միեւնոյն է, Ատրպեյճանը հարցերի լուծումը տեղափոխում է ուժային մեթոտների կիրառման դաշտ: Ըստ նրա՝ քանի դեռ Ատրպեյճանը չի ենթարկուել պատժամիջոցների ու չի բախուել իր քաղաքականութեան հետեւանքներին, որեւէ կերպ չի փոխի իր գործելակերպը:

«ԱՐՄԵՆՓՐԵՍ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՏԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԻՍՏԻՍՏԱՆԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

Հերթական Խայտառակութիւնն Ու Հայաստանի Թիւ Մէկ Մարտահրաւէրը

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՆ

Հայաստանի խորհրդարանում հերթական միջադէպն է քաղաքական մեծամասնութեան ու ընդդիմութեան միջեւ, որին միջադէպ անուանելը թերեւս արդէն իսկ որոշակի հաճոյախօսութիւն է, քանի որ առաւել բնորոշ ձեւակերպումը «հերթական ռազմարկ» բառակապակցութիւնն է, որը սկսեց խորհրդարանի նախագահ Ալեն Միմոնեանը՝ արձագանքելով ընդդիմութեան ներկայացուցիչ Արծուիկ Մինասեանի ելոյթին, որում նա հակադարձում էր պատգամաւոր Վիգէն Խաչատրեանի հոգեհանգստի արարողութեանը չմասնակցելու մեղադրանքներին, որ մեծամասնութիւնը ուղղում էր ընդդիմութեանը:

Ահա այդ ամէնը հանգեցրեց «հերթական ռազմարկային», հերթական անգամ ցոյց տալով, որ 2021 թուականի խորհրդարանի

արտահերթ ընտրութեամբ ձեւաւորուած այս խորհրդարանը գործնականում ունակ չէ որեւէ այլ կայուն գործունէութեան, քան այն պարբերական «ռազմարկային» ներկայիս եւ նախկին իշխանութիւնների միջեւ, անցեալ ու ներկայ յիշատակելով, որ կանոնաւոր կերպով տեղի է ունենում արդէն երկու տարի: Եւ սա այն պարագայում, երբ Հայաստանը կանգնած է պատմական կարեւորագոյն շրջափուլում, ունի ահռելի խնդիրներ, որոնց շուրջ կոնցեպտուալ քննարկումները, եւ անհրաժեշտութեան դէպքում օրէնսդրական նախաձեռնութիւններով Հայաստանի դիմակայունութեան բարձրացումը պէտք է լինի այդ ժամանակաշրջանում գործունէութիւն ծաւալող խորհրդարանի այցեքարտը: Ընդ որում ասել, թէ այստեղ խնդիրը միայն խորհրդարանական ընդդիմութեան դաշտում է, նշանակում է չնկատել խնդրի ամբողջ խորու-

թիւնը: Մեծամասնութիւնն ու ընդդիմութիւնը արժեն միմեանց եւ ամէն յաջորդ աղմկոտ միջադէպի պարզապէս հաստատում է այդ հանգամանքը:

Սակայն, Հայաստանի համար խնդիրը ունի իհարկէ առաւել ընդգրկուն շրջանակ, քան լոկ խորհրդարանը: Բուն հարցն այն է, որ, եթէ վաղը Հայաստանում անցկացուի խորհրդարանի նոր ընտրութիւն, ապա մենք ստանալու ենք գործնականում նոյն պատկերը, առանձին շտրիխների տարբերութեամբ: Ու սա շատ լաւ գիտեն նաեւ խորհրդարանական ուժերը, գիտեն, որ այդ առումով իրենք մեծ հաշուով անմրցակից են, Հայաստանի քաղաքական դաշտում չունեն որակապէս այլ կարգի մրցակցութեան մարտահրաւէր: Ու դա է Հայաստանի քաղաքական հեռանկարի թիւ մէկ մարտահրաւէրը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի Մեջ Աշխատավարձը Շարունակական Կը Բարձրանայ

Հայաստանի մէջ աշխատավարձի ֆոնտի շօշափելի ան արձանագրուած է: Կառավարութեան Յունիս 22-ի նիստին ժամանակ այս մասին ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ ներկայացնելով վիճակագրական վերջին տուեալները:

«2018 թուականի Մայիսի համեմատ 2023 թուականի Մայիսին Հայաստանի Հանրապետութիւնում աշխատանքային ֆոնտը կրկնապատկուել է՝ աւելանալով 106,6 տոկոս կամ 103 միլիաո 40 միլիոն դրամով: Այսինքն՝ այսօր Հայաստանի Հանրապետութիւնում աշխատող մարդիկ 103 միլիաո 40 միլիոն դրամով աւել աշխատավարձ են ստանում, քան 2018 թուականի Մայիսին:

Շատ կարեւոր է նաեւ միջին աշխատավարձի ցուցանիշը: Հայաստանի Հանրապետութիւնում մէկ մարդու միջին աշխատավարձը 2018 թուականի Մայիսի համեմատ աւելացել է 101 հազար 629 դրամով կամ 57,6 տոկոսով, իսկ նախորդ տարուայ Մայիսի համեմատ 40 հազար 323 դրամ կամ 17 տոկոսով: Հայաստանի Հանրապետութիւնում աշխատավարձը շարունակական բարձրանում է:

Հայաստանը 2,9 Միլիաո Դրամի Չափով Ֆինանսաւորում Պիտի Տրամադրէ Արցախին

Հայաստանը 2,9 միլիաո դրամի չափով ֆինանսաւորում պիտի տրամադրէ Արցախին՝ ընկերային լարուածութիւնը մեղմելու համար: Համապատասխան նախագիծը ընդունուեցաւ կառավարութեան հերթական նիստին ընթացքին:

«Ներկայացուած նախագիծով նախատեսուած է Հայաստանի 2023 թուականի պետական պիւժետէի հարկային եկամուտներէն 2,9 միլիաո դրամի չափով միջպետական վարկ տրամադրել Լեռնային Ղարաբաղին՝ յետպատերազմեան ժամանակահատուածում Լեռնային Ղարաբաղի տարածքում ստեղծուած ընկերային լարուածութեան մեղմմանն ուղղուած լրացուցիչ ֆինանսաւորման համար»:

2022 տուեալներով սղածի ազդեցութիւնը հանած՝ 6,3 տոկոսով Հայաստանում աշխատավարձը բարձրացել է», ընդգծեց վարչապետը:

Վարչապետը աշխատավարձի ֆոնտի բարձրացումը կը համարէ կառավարութեան կողմէ իրականացուած բարեփոխումներու արդիւնքը:

Հայաստանի մէջ 2023 թուականի Յունիս 1-էն կրկին պիտի բարձրացուին կենսաթոշակները յայտնեց վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Մենք ասում ենք, որ նախորդ տարի Հանրապետութիւնում կենսաթոշակները բարձրացրել ենք երկու անգամ, բայց ես համարում եմ, որ բարձրացրել ենք երեք անգամ՝ գումարած նաեւ անկանխիկ գործարքների դէպքում կենսաթոշակի յետվճարի ծրագիրը: Յոյս ունեմ, որ չենք մոռացել, եւ եւս մէկ անգամ կենսաթոշակները Յունիսի 1-ից պէտք է բարձրացնել», ըսաւ Փաշինեան:

Աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարար Նարեկ Մկրտչեան իր հերթին նշեց, որ յաջորդ նիստին մանրամասն պիտի ներկայացնեն նախագիծը:

սաւորման համար», նշուած է նախագիծի հիմնաւորման մէջ:

Հոլանտայի մէջ Հայաստանի դեսպան Տիգրան Բալայեան Թուրքիոյ գրած է. «Արսէն Թորոսեանի հետ Եւրոխորհրդարանի հոլանտացի պատգամաւոր Պերթ-Յան Ռյուսենին ուղեկցեցանք Գորիս եւ Լաչինի միջանցքի սկիզբը, ուր Ալիեւի ցեղասպան վարչակարգը կը պահպանէ Արցախի ապօրինի շրջակալուծումը:

Գորիսի մէջ մենք հանդիպեցանք արցախցիներու, որոնք չէին կարենար հասնիլ իրենց տուները: Անոնք «առաջին ձեռքէն» պատմեցին Արցախի մէջ տիրող մարդասիրական սարսափելի իրավիճակին մասին»:

2023-ի Յունուար-Մայիսին Տնտեսական Աշխուժութեան Աճը Կազմած Է 12,5%



Հայաստանի մէջ բարձր տնտեսական աշխուժութիւնը կը պահպանուի: Վիճակագրական կոմիտէի հրապարակած տուեալներուն համաձայն՝ 2023-ի Յունուար-Մայիսին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ Հայաստանի մէջ տնտեսական աշխուժութեան ցուցանիշը կազմած է 12,5%: Ուշագրաւ է, որ 2023-ի Մայիսին 2022-ի Մայիսի նկատմամբ տնտեսական աշխուժութիւնը եղած է 13,7 տոկոս, այսինքն, բարձր աճը արձանագրուած է նախորդ տարուան արդէն բարձր ցուցանիշերուն համեմատ:

ամիսներուն համեմատաբար բարձր աճ արձանագրուած է առեւտուրի շրջանառութեան մէջ՝ 24,5%, ծառայութիւններու ոլորտին մէջ՝ 19,9%, շինարարութեան մէջ՝ 16,7%: Արդիւնաբերութեան ոլորտին մէջ աճը կազմած է 3%:

Յունուար-Մայիսին արտաքին առեւտրաշրջանառութիւնը աճած է 86,9%-ով: Ընդ որում, արտահանումը աճած է 93,3%-ով, իսկ ներմուծումը՝ 83,3%-ով: Վերջին մէկ տարուան ընթացքին արտաքին առեւտրաշրջանառութեան շարունակաբար աճը մասնաձեւերը կը բացատրեն դէպի Ռուսաստան վերարտահանման հանգամանքով:

Սերժ Սարգսեանի Անունը Իրաւապահները Կը Կապեն Եւս Մէկ Քրեական Գործի Հետ

Նախկին նախագահ Սերժ Սարգսեանի անունը իրաւապահները կը կապեն եւս մէկի գործի հետ: Գլխաւոր Դատախազութիւնը հաղորդեց, որ քրէական գործ յարուցուած է 19 տարի առաջ Պաշտպանութեան Նախարարութեան մէջ անշարժ գոյքի գործարքի մը առնչութեամբ:

2004 թուականին Սարգսեանը կը ղեկավարէր ռազմական գերատեսչութիւնը: Պաշտօնաթող նախագահին մեղադրանք դեռ չէ ներկայացուած: Քրէական գործը յարուցուած է պաշտօնական լիազօրութիւնները անցնելու յօդուածով:

Շինութիւնը կը գտնուի Նոր Նորքի «Տիգրան Մեծի անուան զբօսայգի» տարածքին մէջ: Իրաւապահները կը պնդեն, որ Քրեատիթ-Երեւան դրամատան հետ գործարքը կնքած է Սերժ Սարգսեանի լիազօրութեան հաղորդմամբ՝ Պաշտպանութեան Նախարարութիւնը Քրեատիթ-Երեւան դրամատունէն կէս միլիոն տոլար պարտքի դիմաց վերցուցած է այգիի տարածքին մէջ գտնուող եւ դրամատան պատկանող աւելի քան 440 քառակուսի մետր մակերեսով շինութիւնն ու նոյն գոյքը մէկ ամիս անց 5.5 անգամ էժան գինով՝ ընդամէնը 90 հազար տոլարով վաճառել Անելիք դրամատան:



Նախկին նախագահ Սերժ Սարգսեան

Իրաւապահները կը հաղորդեն նաեւ, որ «Տիգրան Մեծի անուան զբօսայգի» վաճառուած տարածքը տարիներ առաջ առանձնացուած է այգիի սահմաններէն եւ դասակարգուած է որպէս հասարակական կառուցապատման հողամաս: 2005 թուականին Երեւանի գլխաւոր ճարտարապետն ալ Անելիք դրամատան տեղեկացուցած է, որ տարածքը կրնայ օտարուիլ, քաղաքապետարանն ալ հողամասը դրամատան վաճառած է աւելի քան 2 միլիոն դրամով եւ արդէն 2018-ին դրամատունը այս գոյքը վաճառած է աւելի քան 100 անգամ բարձր գինով:

14 Միլիոն Տոլար Կաշառք Ստանալու Մէջ Սեղադրուող Նախկին Նախարարի Գոյքերուն Կրայ Արգելանք Դրուած Է

Բնապահպանութեան նախկին նախարար Արամ Յարութիւնեանի կողմէ առանձնապէս մեծ չափերով՝ 14 միլիոն տոլար կաշառք ստանալու դէպքին առթիւ քննուած հեռակայ վարոյթով նախաքննութիւնը աւարտած է:

Մասնաւորապէս՝ քրէական վարոյթով մեղադրեալներ Արամ Յարութիւնեանը, վերջինիս մտերիմ Գագիկ Կարապետեանը եւ Սուրէն Աւագեանը խուսափած են քննութենէն, եւ առկայ են ՀՀ քրէական դատավարութեան օրէնսգիրքի համաձայն որոշում կայացուած է անոնց նկատմամբ հեռակայ վարոյթ իրականացնելու մասին:

Արամ Յարութիւնեանի եւ անոր օժանդակած միւս երկու մեղադրեալներուն՝ Սուրէն Աւագեանի ու Գագիկ Կարապետեանի նկատմամբ որպէս խափանման միջոց ընտրուած է կալանքը: Անոնց պատկանող 3 տասնեակէ աւելի գոյքի եւ դրամական միջոցներու վրայ արգելաբք դրուած է: Մասնաւորապէս՝ արգելադրուած են Ա. Յարութիւնեանին փաստացի պատկանող, Երեւանի մէջ գտնուող՝ Տիգրան Մեծի 4 հասցէի շէնքը, Կ.



Նախկին նախարար Արամ Յարութիւնեան

Ուլնցիի 50/1 հասցէի տունը, Քանաքեռ-Զէյթուն, Դաւիթ Անյալթի փողոցի 10/1 շէնքը, ձ. Պայրոնի ու Ղ. Փարպեցիի փողոցներուն մէջ գտնուող բնակարաններն ու ինքնաշարժի տնակը:

Արգելադրուած են նաեւ Արամ Յարութիւնեանի դրամատունային հաշիւներուն մէջ առկայ՝ 1 միլիոն 704 հազար տոլարի, 11 հազար եւրոյի եւ 350 միլիոն ՀՀ դրամի չափով դրամական միջոցները:

Եկամուտ Ստացող Աշխատատեղիներուն Թուաքանակը 2022-ի Մայիսին Համեմատ Աճած Է 45 Հազարով, Կամ 6,7%-ով

Հայաստանի մէջ հարկ վճարողներու կողմէ 2023 թուականի Մայիսի համար ներկայացուած եկամտային հարկի եւ ընկերային վճարումի հաշուարկներուն տուեալներով՝ եկամուտ ստացող աշխատատեղիներու թուաքանակը կազմած է 718.266, ինչ որ գերազանցած է նախորդ տարուան նոյն ամսուան ցուցանիշը՝ 45 հազար 42-ով կամ 6,7%-ով:

Հարկ վճարողներու կողմէ դուրս գրուած հաշուարկային փաստաթուղթերու տուեալներով 2023-ի Մայիսին իրականացուած է 55,3 միլիոն գործարք՝ 978,7 միլիաո դրամ արժէքով, ինչ որ գերազանցած է նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին ցուցանիշը՝ քանակային 3,6 միլիոն գործարքով կամ 7,1%-ով, իսկ արժէքային՝ 186,2 միլիաո ՀՀ դրամով կամ 23,5%-ով:

ԼՈՒՐԵՐ

Ատրպեյճանի Արտաքին Գործերու Նախարարին Յայտարարութիւնը Ինքնախաբէութիւն Է. ԶԶ Աժ Նախագահ Ալէն Սիմոնեան

Լեռնային Ղարաբաղի մէջ ապրող հայերու իրաւունքներու եւ անվտանգութեան հարցը կարեւոր է, որովհետեւ այդ հարցը չի կրնար ուղղակի մոռացութեան մատնուիլ, հակառակ պարագային խնդիրը լուծում պիտի չստանայ: Ազգային ժողովին մէջ լրագրողներու հետ ճեպագրուցին այս մասին յայտնեց Աժ նախագահ Ալէն Սիմոնեան՝ արձագանգելով Ատրպեյճանի արտաքին գործերու նախարար ձէջհուն Պայրամովի այն յայտարարութեան, որ Ատրպեյճան կը մերժէ Լեռնային Ղարաբաղի մէջ բնակող շուրջ 120 հազար հայերու համար անվտանգութեան յատուկ երաշխիքներ տրամադրել:



Աժ նախագահ Ալէն Սիմոնեան

«Կարծում եմ, որ այդ յայտարարութիւնը հէնց ատրպեյճանական կողմին է վնաս տալիս: Նման իրողութիւնները դէպքում խնդիրը լուծում չի ստանայ: Դա իրականութիւնից փախչել է, իրենց ձեռք չի տալիս, որ այդ հարցերը չքննարկուի: Վստահ եմ, որ ինչ-որ փուլի դրան կը գան: Նոյնիսկ հիմա, կարծում եմ, որ դա ուղղակի բանակցութիւններից առաջ բարձր սանդղակ դնելու եւ բանակցութիւնների ժամանակ օգտագործելու համար է արւում: Իմ տպաւորութիւնն այդպիսին է», ըսաւ Սիմոնեան:

Ճշգրտող հարցին, թէ ի վերջոյ Ատրպեյճանը պիտի համաձայնի՞ Պաքու-Ստեփա-

նակերտ երկխօսութեան միջազգային մեխանիզմի ստեղծման, Ալէն Սիմոնեան պատասխանեց.

«Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի իրաւունքների եւ անվտանգութեան հարցը կարեւոր է, որովհետեւ այդ հարցը չի կարող ուղղակի մոռացութեան մատնուիլ: Դա ինքնախաբէութիւն է: Եթէ Ատրպեյճանը պատրաստ է ինքնախաբէութեամբ զբաղուել, Հայաստանը պատրաստ չէ ինքնախաբէութեամբ զբաղուել: Այն, ինչը որ մենք յայտարարել ենք, հետամուտ ենք լինելու այդ յայտարարութեանը», եզրափակեց Սիմոնեան:

Հասանով Յայտնած Է Թէ, «Մեծ Ձանքեր Չեն Պահանջուի Ղարաբաղի Մէջ Մնացած Ռազմական Խմբաւորումները Ոչնչացնելու»

«Ատրպեյճանական բանակը պատրաստ է գինաթափելու Ղարաբաղի մէջ մնացած ապօրինի ռազմական խմբաւորումները. անոր համար մեծ ջանքեր չեն պահանջուի», յայտնած է Ատրպեյճանի պաշտպանութեան նախարար Զաքիր Հասանով:



Ատրպեյճանի պաշտպանութեան նախարար Զաքիր Հասանով

Յղում ընելով նախագահ Ալիեւին՝ Հասանով սպառնացած է, թէ որեւէ սադրանք Ատրպեյճանի բանակին դէմ անոնց համար շատ վատ աւարտ պիտի ունենայ, յաւելելով. «Ով կ'ուզէ ընդունիլ Ատրպեյճանի օրէնքները, կրնայ շարունակել ապրիլ Ղարաբաղի մէջ, ով ոչ՝ ճանապարհը բաց է, թող հեռանայ»:

«Մենք առանձնապէս բարձր չենք գնահատեր անօրինական գինուած կազմաւորումներու կարողութիւնները, որոնք մնացած են Ատրպեյճանի դարաբաղեան տնտեսական գոտիին մէջ: Մեզի յայտնի է անոնց քանակութիւնը, սպառազինութիւնը, բարոյսոգեբանական վիճակը, գիտենք, թէ ինչի ընդունակ են: Եթէ այդ անօրինական գինուած կազմաւորումները սադրանքներու երթան, անոնց հարցը կրնայ լուծել ատրպեյճանական բանակի ընդամէնը մէկ զօրամիաւորում, այն ալ ոչ-ամբողջական կազմով: Բայց ես յոյսով եմ՝ բանակաւորութիւնը, այդուամենայնիւ, պիտի չաղթէ, եւ անոնք պիտի հասկնան, որ տարբերակ չունին եւ պետք է միջազգային օրէնքի շրջանակներուն մէջ ճանչնան Ատրպեյճանի տարածքային ամբողջականութիւնը, ճանչնան Ատրպեյճանի

օրէնքները», ըսած է ան:

Անցեալ շաբաթավերջին նոյնը նաեւ նախագահ Իլհամ Ալիեւը կրկնած էր՝ յաւելելով, թէ Ատրպեյճանի բանակը կը շարունակէ խստօրէն գինուել՝ ձեռք բերելով նաեւ հեռահար հրթիռներ:

«Անոնք Հայաստանի կողմէ հնարաւոր վտանգներուն հակազդելու համար են, թէ՞ ինչիւրը պետք է դիտարկել աւելի լայն», հարցուցած է լրագրողը: Հասանով չէ հերքած, որ հեռահար այդ հրթիռներու թիրախին կրնայ նաեւ Հայաստանը ըլլալ, յաւելելով որ ատրպեյճանական բանակը նաեւ թրքական նոր սերունդի «պայքարաթարներ» ձեռք կը բերէ, ինչպէս նաեւ անոնց համատեղ արտադրութիւն կը սկսի:

Հայաստանն Ու Ատրպեյճանը Խաղաղութեան Պայմանագրի Գլխաւոր Հարցերու Շուրջ Կը Շարունակեն Տարածայնութիւններ Ունենալ

Խաղաղութեան նախատեսուող պայմանագրին համար Հայաստանն ու Ատրպեյճանը կը շարունակեն գլխաւոր հարցերու շուրջ տարածայնութիւններ ունենալ:

Այս մասին յայտնեց Հայաստանի Ազգային Ժողովի փոխնախագահ Ռուբէն Ռուբինեանը ասուլիսի ընթացքին՝ անդրադառնալով Ուաշինկթընի մէջ Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ Յունիս 27-ին նախատեսուող բանակցութիւններէն ակնկալութիւններուն:

«Ակնկալում ենք յառաջընթաց: Հայաստանի դիրքորոշումն այն է, որ մենք ուզում ենք ունենալ խաղաղութեան պայմանագրի այնպիսի բնագիր, որը կբխի մեր շահերից եւ հնարաւոր կը լինի ստորագրել: Բնականաբար, գործընթացը բարդ է, կան հարցեր, որոնց շուրջ կան տարածայնութիւններ: Կան նաեւ հարցեր, որոնց շուրջ արդէն կան համաձայնութիւններ: Բայց գլխաւոր հարցերի շուրջ շարունակում են մնալ տարածայնութիւններ», ըսաւ Ռուբինեան:

Ակնկալութիւնք այն է, որ հնարաւոր պիտի ըլլայ եւս քանի մը քայլով մօտեցնել դիրքորոշումները:

Ռուբինեանը չի կարծեր, թէ ապաշրջափակման առումով ինքնիշխանութեան եւ իրաւագորութեան վերաբերեալ համաձայնութիւն չկայ: «Ես տպաւորութիւն ունեմ, որ այդ կէտով համաձայնութիւն կայ: Այլ հարց, որ այդ համաձայնութիւնը դեռ չի հաստատուել թղթի վրայ, յուսով եմ, որ կը հաստատուի», ըսաւ ան:

Ազգային ժողովի փոխնախագահը յաւելեց, որ Հայաստանին պետք է ունենալ իր շահերէն բխող խաղաղութեան պայմանագիր հնարաւորինս արագ: Հայկական կողմին



Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբէն Ռուբինեան

համար կան ամենակցբունքային, ամենակարեւոր երեք կէտեր:

«Առաջինը՝ յստակ քարտեզ դնել տարածքային ամբողջականութեան փոխադարձ ճանաչման հիմքում: Երկրորդը՝ ԼՂ ժողովրդի իրաւունքների եւ անվտանգութեան հասցեագրումն է, որը կարծում ենք, որ պէտք է տեղի ունենայ Պաքու-Ստեփանակերտ երկխօսութեան միջոցով՝ միջազգային մեխանիզմով: Երրորդը՝ երաշխիքների հիմնարկն է», ըսաւ Ռուբինեան:

Ատրպեյճանի հետ ձեռք բերուած պայմանաւորուածութիւնները, օրինակ՝ Նոյեմբեր 9-ի յայտարարութիւնը, խախտուած է: Ազգային ժողովի փոխնախագահը ընդգծեց, որ այդ յայտարարութեան մէջ դժուար է գտնել կէտ մը, որ Ատրպեյճանը չէ խախտած: Հետեւաբար՝ շատ կարեւոր է, որ որոշակի միջազգային երաշխիքներ ըլլան, որ այդ պայմանագիրը կեանքի կոչուի:

Պաքուին Կոչ Կ'ընենք Ապաշրջափակելու Լաչինի Միջանցքով Երթեւեկութիւնը. Զախարովա

Ռուսաստանի Արտաքին Գործերու Նախարարութեան մամուլի խօսնակ Մարիա Զախարովան մեկնաբանած է Ատրպեյճանի կողմէ Լաչինի միջանցքին արգելափակումը:



Ռուսաստանի Արտաքին Գործերու Նախարարութեան մամուլի խօսնակ Մարիա Զախարովա

«Ատրպեյճանական կողմէն Լաչինի միջանցքին մուտքը արգելափակելու առնչութեամբ մենք ուշադրութիւն կը հրաւիրենք այն փաստին վրայ, որ նման գործողութիւնները կը խախտեն Ռուսաստանի, Ատրպեյճանի եւ Հայաստանի դրոյթները: Նման քայլերը կը յանգեցնեն լարուածութեան աճի եւ չեն նպաստեր Ռուսիոյ օգնութեամբ Ատրպեյճանի եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին շուրջ բնական միջնորդութիւն պահպանման: Կոչ կ'ընենք Պաքուին ամբողջութեամբ ապաշրջափակելու Լաչինի միջանցքով երթեւեկութիւնը:

Նաեւ յոյս կը յայտնենք, որ Երեւանը դուրս չի գար եռակողմ ձեւաչափով փոխգործակցութեան: Գործունէութեան դադարը բացասաբար կ'անդրադառնալ տարածաշրջանին մէջ իրավիճակին վրայ եւ կը յանգեցնէ սրումի: Կը նշենք

համապատասխան յանձնաժողովի ծիրին մէջ հայ-ատրպեյճանական սահմանի սահմանազատման ուղղութեամբ կշռութաւոր աշխատանքին կարեւորութիւնը: Պատրաստ ենք տրամադրելու անհրաժեշտ խորհրդատուական օգնութիւն:

«Ռուսական կողմը պիտի շարունակէ աշխույժ ջանքեր գործադրել իրավիճակը Պաքուի եւ Երեւանի հետ շփումներուն մէջ կարգաւորելու ուղղութեամբ», ըսած է Զախարովան:

Ատրպեյճանի Սեջ Կը Պահպանուի Հայաստանի Դէմ Թշնամական Խօսույթը. ECRI-ի Ձեկոյցը

Եւրոպայի Խորհուրդի ցեղապաշտութեան եւ անհանդուրժողականութեան դէմ պայքարի մարմինը՝ ECRI-ն, իր հրապարակած գեկոյցին մէջ նշած է, որ Ատրպեյճանի մէջ կը պահպանուի Հայաստանի դէմ յամառ թշնամական խօսույթը, որուն արմատները կը տարածուին Լեռնային Ղարաբաղի հետ կապուած ձգձգուող հակամարտութեան եւ դիմակայութիւններու ծիրին մէջ:

«Հանրային ատենախօսութիւնը կը բնութագրուի քաղաքական գործիչներու, այդ շարքին՝ ամենաբարձր մակարդակի, եւ այլ հասարակական գործիչներու հրապարակային յայտարարութիւններուն մէջ սադրիչ հռետորաբանութեան օգտագործմամբ, ինչպէս նաեւ աւանդական եւ ընկերային ցանցերուն մէջ ատելութեան պարունակի լայն տարածմամբ», կ'ըսուի գեկոյցին մէջ:

ECRI-ն կը կիսէ այլ միջազգային կառույցներու կողմէ արտայայտուած խիստ մտահոգութիւնները հասարակական վայրերու մէջ ատելութեան խօսքի կիրառման վերաբերեալ: Ուստի Ատրպեյճանի իշխանութիւնները պէտք է ուժեղացնեն ատելութեան բորբոքման դէմ իրենց միջոցները՝ ստեղծելով միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ ցեղապաշտութեան արդիւնաւէտ հակազդելու համապարփակ ռազմավարութիւն մշակելու համար, կ'ըսուի գեկոյցին մէջ:

Տեղի Ունեցաւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի 33-րդ Նիստը



«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի նիստը՝ Երեւանի մէջ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան Երեւանի մէջ մասնակցած է «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի 33-րդ նիստին: Միջոցառման մասնակցած են նաեւ հանրապետութեան նախագահ, հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի նախագահ Վահագն Խաչատուրեանը, Ազգային ժողովի նախագահ Ալէն Սիմոնեանը, Սահմանադրական Դատարանի նախագահ Արման Դիլանեանը եւ այլք:

Նիստին ընթացքին հիմնադրամի գործադիր տնօրէն Հայկակ Արշամեանը հանդէս եկած է տարեկան գեկոյցով՝ ներկայացնելով իրականացուած ծրագիրներն ու նախագիծերու ընթացքը: Քննարկուած են հիմնադրամի 2022 թուականի ֆինանսական հաշուետուութիւնն ու 2023 թուականի տարեկան պիւտձէն:

Հայաստան Այցելեց ԱՄՆ Քանզասի Նահանգապետ Լորա Քելին

Անցեալ շաբթուայ ընթացքին Երեւան այցելեց ԱՄՆ Քանզաս նահանգի կառավարիչ՝ Լորա Քելին: Նահանգապետ Քելին Հայաստան ժամանած էր մասնակցելու նահանգային գործընկերութեան նախաձեռնութեան շրջանակին մէջ Քանզասի եւ Հայաստանի միջեւ փոխգործակցութեան ծրագրի 20-ամեայ յոբելեանը նշանակող միջոցառումներուն:



Քելին հետ այցելեց Հայաստանի ազգային հողագործական համալսարան:

Քանզաս նահանգի եւ Հայաստանի միջեւ փոխգործակցութեան ամրապնդման հեռանկարները քննարկելու նպատակով նահանգապետ Քելին հանդիպումներ ունեցաւ ՀՀ պաշտօնատար անձներու, Զինուած ուժերու ներկայացուցիչներու, գործարար համայնքին հետ այցելեց Հայաստանի ազգային հողագործական համալսարան:

ՔՐՈՒՄ 3անձնաժողովի Նիստը

Շարունակուած է 1-էն

հետեւաբար, իր խնդիրն էր հասկնալ՝ ինչպէս կանգնեցնել այդ գործընթացը:

«Եւ ես խոստովանում եմ, որ այդ՝ չեմ կարողացել էր փոխակրիչը կանգնեցնել», ըսաւ վարչապետը:

Փաշինեան միեւնոյն ժամանակ նշեց, թէ չի պնդեր, որ պատերազմէն խուսափելու տեսական հնարաւորութիւն չկար, պարզապէս անոր համար կար պարտադիր մէկ պայջման:

«Ես չեմ ասում, որ պատերազմից խուսափելու տեսական հնարաւորութիւն չկար, բայց այդ տեսական հնարաւորութեան համար պարտադիր պայջման էր Լեռնային Ղարաբաղի հարցի կարգաւորման, եթէ պայջմանականօրէն ասենք, հայկական տեսլականից հրաժարուելը, որը կարող էր տեսական հնարաւորութեան ստեղծել նման զարգացումներից խուսափելու համար», ըսաւ Գործադիրի ղեկավարը:

Անդրադառնալով 2018-2020 թուականներուն բանակի մարտունակութեան՝ Փաշինեան ըսաւ, թէ ստացած է հաւաստիացում, որ լայնածաւալ պատերազմի վերսկսման պարագային հեշտ պիտի չըլլայ, բայց Պաշտպանութեան Բանակը եւ Հայաստանի զինուած ուժերը ի վիճակի են կատարելու իրենց առջեւ դրուած խնդիրները:

Փաշինեան եւս մէկ անգամ պնդեց, որ սպառազինութիւն գնելու հարցով գումարի խնդիր չէ եղած:

Հարցումին, թէ արդեօք բանակը որեւէ սահմանափակում ունեցած է, քաղաքական որոշման արդիւնքով որեւէ գինատեսակ չօգտագործելու համար, Փաշինեան պատասխանեց՝ այդ հարցին կ'անդրադառնայ դուրսից նիստին, այնուամենայնիւ որոշ փակագիծեր բացաւ. «Եղել են գինատեսակներ, որոնց հետ կապուած իրաւունքը լիարժէք եւ ամբողջութեամբ Հայաստանի Հանրապետութեանը չի պատկանել», ըսաւ վարչապետը:

Ճշգոյ հարցին, թէ խօսքը «Իսթանբուլ»-ի մասին է, Փաշինեան պատասխանեց. «Ես փակ հատուածում կը խօսեմ»:

Փաշինեան նաեւ յայտնեց, որ մինչեւ 2020 թուականի Սեպտեմբեր 25-ը, այսինքն՝ պատերազմէն երկու օր առաջ համապատասխան մարմինները պատերազմի հաւանականութիւնը ընդամէնը 30 տոկոս գնահատած են:

«30 տոկոս է եղել (պատերազմի) հաւանականութեան գնահատումը, եւ այդ գնահատումը եղել է ոչ միայն հետախուզութեան, այլեւ մի շարք այլ տուեալների, այդ թւում՝ միջազգային գործընկերների հետ ունեցած շփումներից: Ինչ որ ինչ բան էլ է գեկուցուել. որ պատերազմի հաւանականութիւնը 30 տոկոս է: 30 տոկոսը

էր պայջմաններում չգիտեմ մեծ աթէ մեծ չի, եւ էր պիսի հաւանականութեան էլ է հնչել, որ սա հոգեբանական ճնշում ա քաղաքական իշխանութեան վրայ, որ գնայ քաղաքական իշխանութիւնը անհամաչափ գիշումները», ըսաւ վարչապետը՝ շարունակելով. «Ինչ մի քանի անգամ գեկուցուել է, որ մեր միջազգային գործընկերները նոյնպէս պատերազմը քիչ հաւանական են համարում եւ կոչ են անում, որ Հայաստանի զինուած ուժերը կարող գործողութիւններ չիրականացնեն, էսպէս ասած՝ չեղած տեղից պատերազմ չսադրելու համար: Եւ ես ուզում եմ շատ բաց եւ անկեղծ լինեմ ձեզ հետ: Ես անձամբ էր գնահատականի հետ էր քան էլ համաձայն չէի»:

Քննիչ Յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեանը հարցուց՝ ի՞նչը եղած է զինուած ուժերէն վարչապետին ամենամեծ հիասթափութիւնը, ի՞նչը եղած է ամենամեծ բացասական բացայայտումը: Փաշինեան պատասխանեց՝ իր համար ցնցում էր տեսնել դասալքութեան կամ անոր նմանող դէպքերու բաւական մեծ ծաւալը. «Սա իրաւապահներից ստացուած տեղեկատուութիւնն է: 44-օրեայ պատերազմի եւ յայտարարուած ռազմական դրութեան ժամանակահատուածում գինուորական ծառայութեան կարգի դէմ ուղղուած, ինչպէս նաեւ այլ յանցագործութիւնների դէպքերով նախաձեռնուած բազմաթիւ քրէական վարչութիւններ վերաբերուած են ընդհանուր առմամբ շուրջ 12 հազար 600 անձի»:

Քննիչ Յանձնաժողովի նախագահը եւս մէկ հարցում տուաւ Շուշիի մասին: Ըստ Քոչարեանի՝ Նոյեմբեր 9-ի դրութեամբ գինուած ուժերուն մէջ կար աւելի քան 117 հազար անձնակազմ, ինչպէ՞ս 117 հազարէն չգտնուեցաւ 5 հազար մարդ, որ պահէր Շուշին: Վարչապետը արձագանքեց՝ այդ դրուագով դատարանին մէջ արդէն գործ կայ, ապա խոստացաւ դուրսից

նիստին այդ մասին խօսիլ: «Ինչ գեկուցուել է, որ Շուշիում մենք գինուոր չունենք, ես հարցրել եմ՝ ինչո՞ւ եւ ստացել եմ պատասխան, որը դուրսից պատրաստ եմ հրապարակել», ըսաւ Փաշինեան:

Մինչեւ պատերազմը ինքն իրեն ճիշդ ինչի՞ մէջ մեղաւոր կը համարէ. այս հարցին ալ Փաշինեան պատասխանեց, թէ իրեն ամէն ինչի մէջ մեղաւոր կը համարէ. «Քաղաքական, բարոյական, հոգեբանական, մարդկային մակարդակներում: Բացարձակապէս ամէն ինչի մէջ մեղաւոր եմ համարում, բայց ասում եմ՝ շատ լաւ, էր յայտարարութիւն է, բնագիրը: Երբ որ սկսում եմ ձեւակերպել, ինքս իմ մեղադրական եզրակացութիւնը, սկսում եմ ձեւակերպում եմ, ձեւակերպում եմ, ձեւակերպում եմ... մէկ էլ ինչ-որ մի տեղ մտնում եմ փակուղի»:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը կը կարծէ, որ 44-օրեայ պատերազմի ընթացքին առաջնագիծին վրայ տեղի ունեցած որոշ դրուագներու նպատակը եղած է Հայաստանի մէջ իշխանափոխութիւն կազմակերպելը:

«Պատերազմի հետ կապուած շատ դրուագներ կան, որ ինչ յանգեցրել են մտքերի ու վարկածների, որ այն, ինչ տեղի է ունեցել առաջնագիծում, դրա նպատակն իրականում Հայաստանում իշխանափոխութիւն կազմակերպելն է եղել: Շատ երկար, նոյնիսկ մինչեւ պատերազմի աւարտը ես ինչ թոյլ չեմ տուել մտքով այդպիսի բան անցկացնել: Բայց, հետագայում մի շարք իրադարձութիւններ վերլուծելով, մէկ-մէկ սկսում եմ մտածել դրա մասին», ըսաւ Փաշինեան:

Ըստ Նիկոլ Փաշինեանի՝ 44-օրեայ պատերազմի ընթացքին Հայաստանը չէ ձանձրացւած Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը, քանի որ այդ պարագային նոյնիսկ Նոյեմբեր 9-ին հնարաւոր էր ըլլար պատերազմը կանգնեցնել:

Buy Armenian - «Գնել Հայկական» Վաճառատան Պաշտոնական Բացումը



ԱՄՆ-ի եւ յատկապէս Կլենտէյլի առեւտրական տարեգրութեան մէջ, բացառիկ իրադրութեամբ մը, նշուեցաւ Buy Armenian («Գնել Հայկական») վաճառատան հանդիսաւոր բացումը, որ տեղի ունեցաւ անցեալ Հինգշաբթի, Յունիսի 22-ին, 2023 Կենտէյլի մէջ:

Արդարեւ, Կլենտէյլ քաղաքի եւ շրջակայքի հայ գաղութը իսկա-

յատանն էր: Վաճառատան բացման օրը՝ այցելուները սիրալիւր կերպով կը դիմաւորուէին հաստատութեան հիմնադիրներուն Նշան եւ Լիլիթ Օտապաչեաններու ու անոնց աշխատակազմին կողմէ: Ընդհանուր մթնոլորտը հայկական էր ներառեալ երաժշտութիւնը, շնորհալի քանոնահարուհի Նեկտարին Զիլեանի քաղցրահնչուն կատարում-



պէս ապրեցաւ պատմական օր մը: Այդ օր, առաջին անգամ ըլլալով, ներկայ կ'ըլլանյինք իր տեսակին մէջ աննախադէպ երեւոյթի մը: Այո՛ իւրաքանչէր եւ աննախադէպ էր, քանի որ բացումը կը կատարուէր վաճառատան մը որ տարբեր էր գոյութիւն ունեցող տեղական խանութներէն ու վաճառատուներէն: Տարբերութիւնը՝ անոր հայկականութիւնն էր, հարիւր տոկոսով հայկական: Քանի որ ցուցադրուած եւ վաճառքի հանուած բոլոր ապրանքներու սկզբնաղբիւրը՝ Հա-

ներով: Ներկաներուն մէջ կը գտնուէին Հայաստանի նախկին հիւպատոս Տիար Արմէն Բալբուրդեան, Արցախի նախկին առաջնորդ Գերշ. Պարզեւ Արք. Մարտիրոսեան, Հոգշ. Զարեհ Վրդ. Մարգիսեան, Քալիֆոռնիոյ Նահանգային Ծերակոյտի անդամ էնթրէնի Փորթանթիմո, Կլենտէյլի քաղաքապետական Խորհուրդի անդամներ, հայ մամուլի եւ հեռուստակայաներու ներկայացուցիչներ, արդիւնաբերողներ, գործատէրեր եւ համա-

կիրներ: Եկեղեցական յատուկ արարողութեամբ մը օրհնուեցան աղն ու հացն ու ջուրը եւ նորահաստատ հայկական վաճառատունը, որմէ ետք տեղի ունեցաւ կարմիր ժապաւէնի հատումը, բուն ծափահարութիւններով:

Բարի գալուստի խօսքերով հանդէս եկաւ հաստատութեան հիմնադիրներէն Տիկին Լիլիթ Օտապաչեան: Ան ողջունելով ներկաները, պարզեց սոյն ազգօգուտ եւ հայրենանուէր նախաձեռնութեան առաջադրանքները, որ կը միտի քաջալերել հայրենական արտադրութիւնները սատարելով անոր վերելքին, ինչպէս նաեւ հայրենիքսփիւռք կապերու առաւել ամրապնդումին:

Այս առթիւ սրտի ջերմ խօսքերով ելոյթներ ունեցան նախկին հիւպատոս Տիար Արմէն Բալբուրդեան, էնթրէնի Փորթանթիմո (որ յանձնեց շնորհաւորական պաշտօնական հուշակագիր մը), Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի անունով՝ Գերշ. Տ. Պարզեւ Արք. Մարտիրոսեան, ու Թորոնթո Եպսի. կողմէ Հոգշ. Տ. Զարեհ Վրդ. Մարգիսեան եւ ուրիշներ: Բոլորն ալ շնորհաւորեցին այս հայրենասէր օգտաշատ նախաձեռնութիւնը եւ անոր բազմաբնոյթ առաւելութիւնը, մաղթելով յարաճուն վերելք եւ նորանոր ձեռքբերումներ: Աւարտին շնորհակալական խօսքով ելոյթ ունեցան Նշան Օտապաչեան: Ան յոյս յայտնեց որ այս ներդրումը կ'արժանանայ համաժողովրդական

խրախուսանքի: Այնուհետեւ ներկաները շրջայց մը կատարեցին նորահաստատ վաճառատան իրարու կցուած բաժանմուքները: Անոնք հիացումով դիտեցին հայրենի արտադրութիւններու բազմահարիւր տեսակները եւ ծախու հանուած նմոյշները: Հոն կային Արցախի եւ Հայաստանի մէջ շինուած հայկական գորգեր, զգեստներ, պայուսակներ: Իսկ մանուկներու յատուկ դաստիարակչական արդիական պիտանի առարկաներ, գոհարեղէններու բաժնի մէջ կային ապարանջաններ, մանեակներ, օղեր եւ բարձր ճաշակի ալլ գարդեղէններ, շապիկներ, շարֆեր, յախճապակեայ տնային ու խոհանոցային առարկաներ եւ բազմատեսակ ալլ իրեր: Ուտեստեղէնի, պահածոյ ապրանքներու եւ ըմպելիներու բաժին չկար: Ուշագրաւ էին միայն փոքր եւ զեղեցիկ պարկերու մէջ դրուած հայրենի երկրագործական արտադրատեսակներէն չոր պտուղներու նմոյշները: Այլ խօսքով եղածը՝ ակներեւ եւ հպարտառիթ հայկական համապարբակ տաղաւար:

Կը շնորհաւորենք Buy Armenian-ի հիմնադիր Տէր եւ Տիկ. Նշան եւ Լիլիթ Օտապաչեաններն ու իրենց ընտանիքի անդամները, մաղթելով բարի երթ եւ նորանոր յաջողութիւններ ու յարաճուն վերելք իրենց այս յոյժ ազգօգուտ նախաձեռնութեան:

Միշտ ի մտի ունեցէք նաեւ «Գնել Հայկական»ը հասցէն՝ Buy Armenian 3728 San Fernando Road Glendale, CA

Ներկայացուցիչներու Տան Անդամը

Շարունակուած էջ 1-էն

պատուիրակութիւն՝ տեղույն վրայ գնահատելու իրավիճակը:

Նոյն լուծումներու ընթացքին Հայկական Յանձնախումբի համանախագահ Ֆրանք Փալոն ներկայացուց իր դիտարկումներն ու առաջարկութիւնները, նախեւառաջ ընդգծելով Ատրպէյճանի ցեղասպանական մտադրութիւնը՝ Արցախի ժողովուրդին դէմ շարունակուող յարձակման եւ շրջափակման պայմաններուն մէջ:

Փալոնի դիտարկմամբ՝ Ատր-

պէյճանի նախագահը մէկ կողմէ կը քննարկէ արցախեան հիմնահարցը, բայց միւս կողմէ կը տեղահանէ արցախահայերը՝ չփորձելով նոյնիսկ թաքցնել շարունակաբար հայկական տարածք մահաբեր ներխուժումներ իրականացնելու նկրտումները:

«Արդէն ժամանակն է, որ Միացեալ Նահանգները սկսի աւելի լաւ ու արդիւնաւէտ կիրառել իր տրամադրութեան տակ գտնուող դիւանագիտական գործիքները, ներառեալ պատժամիջոցները, որպէսզի վերջ տայ այս ճգնաժամին», ըսած է Փալոնը:

Ռուսաստան Տագնապի Առջեւ

Շարունակուած էջ 1-էն

տամբութեան այս էջը փակուած է, սակայն իշխանութեան համար պայքարը նոր կը սկսի:

Նոյն մեկնաբաններու կարծիքով Պրիկոժին նման շրջադարձը կրնայ կապուած ըլլալ քանի մը ազդակներու հետ. նախ այն որ, ան չէր ծրագրած իր քայլերու յաջորդականութիւնը եւ կամ ալ չգտաւ իր ակնկալած ժողովրդային եւ զինուորական աջակցութիւնը:

Ինչ կը վերաբերի Հայութեան, դէպքերու այլ ուղղութիւններով զարգացումը եւ ստեղծուած պայմաններու բերմամբ ռուսական զօրքերու հեռացումը Լեռնային Ղարաբաղէն կրնար աւելի բարդացնել Արցախահայութեան վիճակը, իսկ Ռուսաստանի աշխա-

տանքային շուկայի փակումը հարիւր հազարաւոր Հայ ընտանիքներու ապրուստը պիտի դնէր վտանգի տակ՝ մեծ հարուած հասցնելով նաեւ Հայաստանի տնտեսութեան: Ռուսաստանի ամբողջական տկարացումը չի կրնար նպաստել մեր շահերուն՝ որքան ալ որ դժգոհութիւններ ունենանք մեր նկատմամբ Մոսկուայի վարած քաղաքականութեան հարցով:


Արդեօք մշակութային խոչընդոտ կայ տեղացի արեւելահայերուն եւ արեւմտահայ հայրենադարձներուն միջեւ: Անշուշտ, բայց այդ մէկը յաղթահարելու միակ միջոցը միջավայր ստեղծելն է, ուր անոնք կրնան ամէն օր երկար ժամանակով շփուիլ իրարու հետ: Բնականօրէն, պարզապէս շուկայէն գնուած ընելը կամ տեղացի վարորդին հետ թաքսի նստիլը բաւարար չէ: Ընկերային յարաբերութիւններ հաստատուելու ամենէն արդիւնաւէտ միջոցը աշխատանքն է: Յաւոք, սակայն, այսօր գործ գտնելը դժուար է թէ՛ տեղացի հայերուն, թէ՛ ալ հայրենադարձներուն համար:

Այն կարծիքը, թէ հայրենադարձները դժուարութիւն կ'ունենան գործ գտնելու միայն այն պատճառով, որ օտարերկրացի կը նկատուին, անհեթեթ է ու ծիծաղելի: Դժուար շուկայ է Հայաստանի աշխատանքի շուկան, եւ խոստովանինք, որ հայրենադարձները աւելի քիչ անարդարութեան կ'ենթարկուին, քան տեղացիները, որովհետեւ անոնցմէ ակնկալութիւնները աւելի մեծ են:

Եզրակացնելով՝ միաձուլման ազգային գործնառնական տակաւին հեռու է իրականացուելէ Հայաստանի մէջ: Անհրաժեշտ է, որ հայրենադարձները աշխուժօրէն ներգրաւուին, խառնուին եւ համարկման առիթներ ստեղծեն տեղացիներուն հետ: Շատ հաւանական է, որ սկիզբը դիւրին չըլլայ, բայց ինչպէս Apollo Creed-ը կ'ըսէ Rocky Ֆրիմին մէջ. «Ժամանակ տուր, եւ ան մինակը կու գայ»:

AUGUST 27 • 2023

SAVE THE DATE

AEBU 5TH ANNUAL SCHOLARSHIP AWARDS CEREMONY & GALA

ՀԻՄՆԱԿԱՆ ԼՍՄԻՍԿԱՆ ԼՍԻՄԵՏԻՆ ԹԻՊ

Նովանաորութեամբ՝

Թեմիս Բարեցան Առաջնորդ

ԳԵՐԾ. Տ. ՅՈՎԷԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ

Կազմակերպութեամբ՝

«ԶՈՒԱՐԹՆՈՑ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ

Դասախօսութիւններու շարքին երրորդը

ՀԱՄԱՀԵԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԸ՝ ՓՈՒԿՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՒ ՈՒՂԻՆԵՐ ԴԵՊԻ ԽՈՐԱՅՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Կը ներկայացնէ՝

Լուս Անճելլիսի ՆՆ Նախկին Ընդհանուր Հիւպատոս

Վսեմաշուք Տիար

Դեսպան ԱՐՄԷՆ ԲԱՅԲՈՒՂԵԱՆ

Հինգշաբթի, Յուլիս 6, 2023, երեկոյեան ժամը 7:00ին

Առաջնորդարանի «ԱՐՄԷՆ ՀԱՄԱՐ» սրահին մէջ
3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504

Մտորը ազատ

Հիրասիրտութիւն

Նափոլիի Հայկական Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցին

ԴՈՎՏ. ԱՐԷԼ ՔՅՆՅ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Տեղեակ էի, որ Խոալիոյ Նափոլի քաղաքին մէջ հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչի անունին ձօնուած եկեղեցի մը գոյութիւն ունի եւ այնտեղ դարերէ ի վեր կը պահպանուին մաս մը անոր հրաշագործ մասունքներէն: Յաւօք, տակաւին մինչեւ վերջերս կարելիութիւնը չէի ունեցած գտնուելու Նափոլի: Սակայն քանի մը շաբաթ առաջ բախտը վիճակուեցաւ շրջագայութեան մը առթիւ մեկնելու հոն եւ այցելելու հայկական Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որ Խոալերէնով ուղղակի «La Chiesa di S. Gregorio Armeno» [բառացի թարգմանութեամբ՝ Ս. Գրիգոր հայ եկեղեցի] կը կոչուի: Տպաւորութիւնս ցնցող էր, որովհետեւ պատկերացումէս շատ աւելի հզօր էր իրականութիւնը, ոչ միայն անոր համար, որ Խոալիոյ այս կարեւորագոյն քաղաքներէն մէկուն մէջ մեծ սուրբին շնորհիւ հայոց անունը մնայուն ներկայութիւն մըն է, այլեւ հսկայակառուց եկեղեցիին պատերուն վրայ հանճարեղ նկարիչներ իրենց վրձինով յաւերժացուցած են Հայաստան աշխարհի դարձի լուսապսակ հեղինակութեան կենդանագիրը՝ չարչարանաց պատմութիւնը, քարոզութիւնը, Տրդատ Գ. թագաւորին դարձը, հայոց մկրտութիւնը, Լուսավորիչի՝ Կեսարիոյ մէջ Ղեւոնդիոսէ եպիսկոպոս օծուելը եւ այլն:


Քաղաքին կեդրոնական եւ բազմամարդ փողոցներէն մէկը, ուր Ս. Գրիգոր (Լուսավորիչ) հայ եկեղեցին կը գտնուի, նոյնինքն եկեղեցիին անունով «Via S. Gregorio Armeno» կը կոչուի: Հպարտութեամբ տոգորուած եւ տեսակ մը երախտագիտութեան զգացումով ուղեկիցներու հետ կը փութամ փո-

կը գտնուի գլխաւոր խորանը՝ Giovanni Bernardo Lamassi վրձինէն Յիսուսի Համբարձման 1574 թուականին ստեղծագործուած փառահեղ նկարով:

Պատարագի աւարտին մօտեցայ միանձնուհիներէն մէկուն, պարզեցի ինքնութիւնս եւ քանի մը տեղեկութիւններ խնդրեցի եկեղեցիին մասին: Շահեկանութեան իմաստով գանոնք պիտի ուզէի ներկայացնել ստորեւ.

«Սրբազան աւանդութեան մը համաձայն, հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին հիմնուած է Լ. դարուն, երբ պատկերամարտութեան Բ. շրջանին խումբ մը հայ միանձնուհիներ Բիւզանդիայէն փախուստ տալով կը հասնին Նափոլիի նաւահանգիստը: Անոնք իրենց հետ կը բերեն Ս. Գրիգոր Լուսավորիչի մասունքները, որոնց Չերմեռանդութեան եւ աղօթասաց ծառայութեան նուիրած էին իրենց կեանքը: Հայ միանձնուհիները զալով քաղաքին այս նոյն վայրը, մեծ հաւանականութեամբ, գտած են նախնական եկեղեցի մը, որուն կից կառուցներէն մին իրենց համար դարձուցած են վանք եւ Ս. Բարսեղ Կեսարացի հայրապետին վերագրուող կանոններով առաջնորդած են իրենց միաբանութիւնը: Սակայն ժամանակի հոլովոյթին մէջ անոնք հայկական ծագում ունեցող միանձնուհիներու նոր կոչումներ չունենալով՝ իրենց տեղը զիջած են տեղացի կամ օտար միանձնուհիներու, որոնք իրենց վանական կեանքը շարունակած են Ս. Պենտիկտոսի կանոններով:

Այսօրուան առկայ եկեղեցիին շինարարութիւնը սկսած է 1574 թուականին, նախաձեռնութեամբ եւ անձնական ծախսով աբբայուհի Donna Giulia Caraccioloի, նաեւ



Հայկական Ս. Գրիգոր համանուն կուսանաց վանքին մուտքը

Հայ միանձնուհիներու Նափոլի ժամանումը երբեք դրուագներով պատկերուած են մուտքի պատին վրայ: Առաջին դրուագը կը ներկայացնէ միանձնուհիներուն նաւով ժամանումը Նափոլիի նաւահանգիստը: Երկրորդ դրուագը կը ցուցադրէ հայ միանձնուհիները սպիտակ կապաներով եւ սեւ շղարչներով, հաւանաբար Բարսեղեան կրօնաւորութեան այդ ժամանակուան իրենց համազգեստներով, Նափոլի կը փոխադրեն Ս. Գրիգոր Լուսավորիչի մասունքները պարունակող մասնատուփը: Իսկ երրորդ դրուագը աբբայուհիին է, որ ափ դուրս կու գայ եւ մասնաւոր բարեպաշտութեամբ կը դիմաւորուի նափոլիցիներուն կողմէ:

Բնականաբար, եկեղեցւոյ պատերն ու մատուռները զարդարուած են բազմաթիւ որմնանկարներով եւ սուրբադրային, նաեւ եկեղեցական տարբեր դրուագներու եւ

զի կերպարանքով, հայոց թագաւորին մկրտութիւնը ձեռամբ Ս. Գրիգորի, Լուսավորիչի տեսիլքը, հայոց դարձի եւ մկրտութեան տեսարանը, Տրդատ կը մեծարէ Ս. Գրիգորը, Ս. Գրիգոր եպիսկոպոսական կոչումը կը փոխանցէ իր որդւոյն՝ Արիստակէսին, Ս. Գրիգորի ձգնակեացութիւնը Մանեայ այլքին մէջ, անոր վախճանումը, հրեշտակաց երկնային դասուն մէջ ընդգրկուելը, ապա Ս. Գրիգոր Լուսավորիչի իր քահանայապետական փառահեղ տեսքով:

Հետաքրքրական է, որ Խոալացի այս գեղանկարիչը՝ Luca Giordano, ինչպէս նաեւ ուրիշներ, կարողով Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» երկի միջնադարեան լատիներէն թարգմանութիւնը՝ քաջածանօթ դարձած են Ս. Գրիգոր Լուսավորիչի վարքին, ու անկէ ներշնչուելով կրցած են թուիչք տալ իրենց երեւակայութեան՝ ստեղ-



Հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ նաւը՝ խորանի մօտ մատուցուող պատարագի ժամանակ

ղոցին կեդրոնը, կանգ կ'առնեմ եկեղեցիին մուտքին առջեւ, կը բարձրանամ քարապատ սանդուխէն, զգուշութեամբ կը բանամ մուտքին դուռը եւ երկիւղածութեամբ կը խաչակնքեմ երեսս եւ սքանչացումով կը դի տեմ անոր ոսկեթոյր հսկայական նաւը: Ինչ լաւ է, որ եկեղեցին վերածուած չէ գթօսաշրջիկներու պարզ թանգարանի մը, այլ ունի միանձնուհիներու միաբանութիւն, համայնք, որ այդ պահուն Չերմեռանդ կը հետեւէր Խոալերէնով մատուցուող սուրբ պատարագի արարողութեան: Պատարագը կը մատուցուէր ժողովրդական խորանին վրայ, որուն ետին

Vincenzo Della Monica եւ Giovan Battista Cavagna շնորհալի ճարտարապետներու նախագիծով: Կառուցը ամբողջապէս աւարտելէ ետք, եկեղեցին կ'օծուի 1579 թուականին ու պաշտօնապէս կը ձօնուի Ս. Գրիգոր Լուսավորիչի սրբակրօն անունին:

Բացի մատուռներէն, միանալ եկեղեցւոյ պատերուն վրայ առանձնապատուկ ուշադրութեան արժանի են նկարչական ստեղծագործութիւնները նափոլիցի տաղանդաւորն Ս. Luca Giordanoի (1634-1705), որոնք իրագործած է եկեղեցւոյ կառուցման 100ամեակին առթիւ՝ 1679 թուականին:



Տրդատ Գ. եւ Ս. Գրիգոր Լուսավորիչ



Հայոց թագաւորը եւ Ս. Գրիգոր Լուսավորիչ

սուրբերու պատկերներով: Սակայն այստեղ մեզ աւելի հետաքրքրողը հայկական մասն է, որ գերազանցապէս կը ներկայացնէ Ս. Գրիգոր Լուսավորիչի կեանքին եւ քարոզչութեան պատմութեան դրուագներ, որոնք ներկայացուած են համապատասխան նիւթերու յաջորդականութեամբ. Տրդատ Գ. վարա-

ծելով վերոնշեալ հրաշալի ստեղծագործութիւնները: Ի դէպ, պէտք է նաեւ նշել, որ եկեղեցւոյ նաւուն աջ եւ ձախ կողմերը ունին չորս մատուռներ, որոնցմէ երրորդը կրկին նուիրուած է Ս. Գրիգոր Լուսավորիչին:

Արամ Խաչատուրեանի Ծննդեան 120-Ամեակը Արամ Խաչատուրեանի Հայրենասիրութիւնը



ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Տարիներ շարունակ, նոյնիսկ տասնամեակների ընթացքում, միշտ խօսակցութիւնների առարկայ է եղել Արամ Խաչատուրեանի հայրենասիրութեան խնդիրը: Աւելի հեռուն գնալով, շատերն անգամ նրան համարել են որպէս ռուս կոմպոզիտոր: Եւ այսօր, Հայաստանի համար այս ծանր օրերին, երբ տեսնում եմ թէ ինչպիսի խանդավառութեամբ են անցնում Արամ Խաչատուրեանի ծննդեան 120-ամեակին նուիրուած փառայեղ միջոցառումները՝ սիրտս փառաւորում է ուրախութիւնից:

Կոմպոզիտորի յրեւելեանական այս օրերին, չափազանց կարեւոր եմ համարում գէթ Սփիւռքի երիտասարդ եւ գալիք սերնդի համար մէկ անգամ եւս անդրադառնալ Արամ Խաչատուրեանի հայասիրութեանն ու հայրենասիրութեանը:

Յիսուն տարի առաջ, անցեալ դարի 70-ականներին, սփիւռքահայ որոշ թերթեր գրեցին, իբր Արամ Խաչատուրեանը ինչ որ տեղ յայտարարել է թէ ինքը հայ է: Այս կապակցութեամբ, կոմպոզիտորը մի ծաւալուն նամակ է ուղարկել իմ բազմաթիւ թեանը, որն աւարտել է հետեւեալ նախադասութեամբ.

- «Բայց ես հայ եմ, եղել եմ, կամ եւ կը լինեմ հայ: Եւ իմ ստեղծագործութիւնը, իմ ամբողջ գործունէութիւնը ամէնից առաջ պատկանում է իմ հարազատ ժողովրդին եւ իմ Հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին»:

Ես տեսել եմ այդ՝ մաքուր հայերէնով ու գեղեցիկ ձեւագրով գրուած նամակի կրկնօրինակը հանգուցեալ լրագրող, «Քաջ Նազար» երգիծական ամսագրի արտոնատէր եւ իմ բազմաթիւ Յովհաննէս Բալայեանի աշխատասենեակում:

-Ներքոյ ստորագրեալ յօդուածում գրեթէ չի խօսուել լու «աշխարհածաւալ» յօրինող-կոմպոզիտոր, հանճարեղ Արամ Խաչատուրեանի երաժշտական բազմաճիւղ գործերի մասին: Հանրայայտ երաժշտի երաժշտական յսկայ ժառանգութեան մասին կարելոյն բաւարար տեսքով ներկայացրել եմ իմ նախորդ երեք յօդուածներում:

- Ճիշդ է, որ Արամ Խաչատուրեանը իր ամբողջ գիտակցական-ստեղծագործական կեանքը հիմնականում անց է կացրել Մոսկուայում, սակայն այդ ընթացքում, 1929 թուականից սկսեալ, գրեթէ ամէն տարի եղել է Հայաստանում, կապ է ունեցել մտաւորականութեան եւ երաժիշտների հետ: Նրա անմիջական նամակագրական կապը եղել է երաժշտագէտ Մարգար

րիտա Յարութիւնեանի հետ, որը իր ողջ կեանքում, օրը-օրին նրան տեղեակ է պահել Հայաստանի մշակութային կեանքին եւ կարեւոր, հիմնականում մշակութային իրադարձութիւններին: Յետագայում երաժշտագէտը հրատարակել է «Նամականի», որի մէջ տեղ են գտել նաեւ կոմպոզիտորի գրառումները, երկրորդանի նամակները եւն: Ի սկզբանէ, Արամ Խաչատուրեանը հասկացել էր, գիտէր, որ ինչպէս Վիկտոր Հիւգոն է ասում՝ «Ինչպէս չի կարելի ապրել առանց հացի, այնպէս էլ անկարելի է ապրել առանց Հայրենիքի»:

Այդ է պատճառը, որ Խաչատուրեանն հպարտութեամբ ասում է.

«...Իմ ամբողջ գործունէութիւնը, ստեղծագործութիւնը, պրակտիկան (փորձառութիւն,- ՀԵՆ. Ա.) խօսում են այն մասին, որ ես հայ եմ: Իմ երաժշտութիւնը բազում արմատներ ունի կապուած հայկական ժողովրդական երաժշտութեան հետ»:

Խաչատուրեանի հայրենասէր լինելու ամէնացալուստն օրինակը «Պայանէ» բալետն է, որի երաժշտութիւնը ազգային ժողովրդական եւ աշուղական երգի փայլուն մշակման եւ շքեղ գործիքաւորման բացառիկ օրինակ է քսաներորդ դարի ողջ դասական երաժշտութեան մէջ: Տարիների ընթացքում «Պայանէ» բալետը դարձաւ «անհայրենիք» ու շրջեց հողագնդով մէկ, աշխարհէ-աշխարհ ու դարձաւ ճիշդ ու ճիշդ ֆրանսիացի կոմպոզիտոր Մէն Սանսի ասածի պէս.

- Եթէ արուեստը նոյնիսկ հայրենիք չունի, արուեստագէտներն այն ունեն:

Անցեալ դարի 30-ական թուականների սկզբներին Ռուսաստանում արդէն ճանաչուած կոմպոզիտոր էր 30-ամեայ Արամ Խաչատուրեանը, սակայն Հայաստանում քչերը գիտէին նրան: Այս երեւոյթը մեծ ցաւ էր պատճառում նրան:

«Հայաստանում ինձ աւելի քիչ գիտեն, քան Ռուսաստանում, ափսոս, որ այդպէս է», - գրում էր նա այդ տարիներին: Իսկ մէկ ուրիշ տեղ՝

- Մի խօսքով, շատ տխրալի է, որ իմ հարազատ երկիրն ինձ չի ճանաչում...:

Հայրենիքում ճանաչուելու, գնահատուելու ցանկութիւնը միշտ է եղել Արամ Խաչատուրեանի մտահոգութեան առարկան:

Հայկական առաջին բալետը, այնուհետեւ դաշնամուրի եւ ջութակի կոնցերտները գրելուց յետոյ, Խաչատուրեանը որոշել էր գրել «Պէպօ» օպերան, պայմանով, որ բեմադրութիւնը ձեւաւորէր

Մարտիրոս Սարեանը:

Որպէս արեւելքի հայ յօրինողի, որպէս կովկասեան երաժշտութեանը քաջածանօթ երաժշտի, ժամանակին Մոսկուայի Մեծ Թատրոնը Խաչատուրեանին առաջարկութիւն է արել գրելու «Հաճի Մուրատ» օպերա՝ ըստ Լեւ Տոլստոյի: Իսկ ինքը, որպէս գտարիւն հայ, ժամանակին որոշել էր գրել «Սայաթ Նովա» օպերա:

Յաւալիօրէն, երկար տարիներ, հենց իր բնօրրանում՝ Հայաստանում, շատ ու շատ վաղ արուեստագէտներ, փորձում էին խանդավառել Արամ Խաչատուրեանի «մուտքը» Հայաստանի երաժշտական աշխարհից ներս: Ընդգծուած տգիտութեամբ, ինչ է թէ կոմպոզիտորը բնակուած է Մոսկուայում, տարիներ շարունակ արհեստական դժուարութիւններ էին հարուցում նրա համաժողովրդական ճանաչման դէմն առնելու համար: Իսկ նա, լաւ իմանալով, թէ ինչպիսի մակարդակի վրայ է Հայաստանի երաժշտական արուեստը՝ գրում էր.

- Տէր Աստուած, ինչքան աղբեն գրում: Եւ ինչպէս են շահարկում նիւթը, ձեռնամուխ են լինում մեծ թեմաների եւ մեծ գաղափարների, նրանք՝ ովքեր դրա իրաւունքը չունեն...: Անաչառ պատմաբանը երբ գրի խորհրդային երաժշտութեան, կամ խորհրդային հայ երաժշտութեան պատմութիւնը, այնուամէնայնիւ պէտք է ասի, որ մեր երաժշտութեան պատմութեան մէջ առաջին սիմֆոնիան գրել է Խաչատուրեանը, դաշնամուրի առաջին կոնցերտը, ջութակի առաջին կոնցերտը, թավջութակի կոնցերտը, առաջին բալետը գրել է Խաչատուրեանը...: Պէտք է այդ մասին մոռանալ, բայց, ցաւոք սրտի, ոմանք ուզում են ինձ հաշուի չ'առնել...:

Արտաքուստ վերամբարձ ոճով գրուած այս սողերը կրկին գալիս են ապացուցելու, որ, ինչ գործ էլ ստեղծել է Խաչատուրեանը՝ այն դարձել է նուաճում ոչ միայն հայկական երաժշտութեան նուաճում, այլեւ ողջ Խորհրդային երկրի համար: Այս առնչութեամբ հետաքրքիր գրառում է արել Դմիտրի Շոստակովիչը. «Ամէն մի նոր գործ, որ ստեղծում է Արամ Իլլիչը՝ դա մեծ տօն է մեզ համար»:

Մէկ ուրիշ գրառում Շոստակովիչից, որ նա արել է Խաչատուրեանի Առաջին սիմֆոնիան լսելուց յետոյ.

- Խաչատուրեանի Առաջին սիմֆոնիան իսկական գմայլանք է կեանքի գեղեցկութեամբ ու հաճոյքներով լի:

Այդ ամէն գագուցները հարազատութիւն երաժշտական լեզուով արտայայտելու ուղին կոմպոզիտորի մօտ յաջողուել է ձեռք բերել անասելի գրկանքների եւ տառապանքի գնով.

- Մէկ օրուայ արարուած ստեղծագործական աշխատանքի ընթացքին (6-8 ժամ), - գրում է կոմպոզիտորը, - ես գրում եմ երաժշտութիւն, որը հնչում է ընդամենը մէկ րոպէ:

Երբեք պիտի չմոռանալ, որ կոմպոզիտորի՝ մեզ ծանօթ գործերից բացի, նա յօրինել է բազմաթիւ ռուսական հալւարաւոր երգեր, կիրնոերաժշտութիւն, քայլերգեր, մանկական երգեր խորհրդային հանրապետութիւնների համար, որոնք երբեք ու երբեք հեղինակին ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ չզարձարին: Դրանք հիմնականում գործեր են, ինչպէս ինքն է ասում՝ «գրուած են դրամի եւ ապրուստի համար»:

Ճշմարիտ արուեստագէտին բնորոշ հոգնատանջ տարիների ընթացքում Խաչատուրեանը երեւան հանեց իր ողջ երաժշտական ժառանգութեան գլուխգործոց համարուող «Սպարտակ» բալետը, որը, թէեւ հին Հռոմի պատմական դրուագներից մէկի վերարտադրումն է երաժշտական լեզուով, նրա երաժշտութիւնը գուտ հայկական է: Հետեւելով 20-րդ դարի խոշորագոյն տպաւորապաշտ (գուտ անձնական տպաւորութեան հետեւող) կոմպոզիտորներ Դէբիլսիի եւ Ռավելիի նուագախմբային գոյների օրինակին, Արամ Խաչատուրեանը իր համար գծեց բոլորովին նոր ուղի, այն է՝ նուագախմբային գոյները հարստացնել ազգային երաժշտութեան կշռոյթով, երաժշտական չափերով եւ հայ լեռնցու եւ սասունցու պարի կրքոտութեամբ:

Այդ ամէնը իրականացնելով բալետի մէջ, Խաչատուրեանը հաւատում էր, որ «Սպարտակ» բալետը կը սիրուի Հայաստանում ու, բնականաբար, խնդրում էր, որ իրեն թոյլատրեն բալետը բեմադրել Երեւանում (Լենինգրադից անմիջապէս յետոյ): Տեսնելով, որ իր խնդրանքը արձագանք չի գտնում Հայաստանի պատկան մարմինների կողմից, նա իր ցաւն էր արտայայտում հետեւեալ պարբերութեամբ.

- Ի՞նչ արած, թող ոմանք ջնջեն ինձ հայ կոմպոզիտորների ցուցակից, բայց ես յուսով եմ, որ ժողովուրդն ինձ չի մոռանալ...:

Հայրենասիրական զգացումները Խաչատուրեանի մտապատկերում ծագել են դեռ մանկուց.

- Ես մեծացել եմ մի շրջապատում, - գրում է նա, - որը լի է եղել ժողովրդական երաժշտութեամբ, որոնք կատարում էին աշուղներն ու երաժիշտները, որոնք եղել են այն տպաւորութիւնները, որ խորը հետք են թողել իմ յիշողութեան մէջ, որոնք ուղղորդել են իմ երաժշտական մտածողութեանը: Ես սիրում եւ պաշտում եմ ժողովրդական երաժշտութիւնը եւ աշուղներին:

Կոմպոզիտորի այդ համոզումը յետագայում փոխանցեց Մոսկուայի պետական երաժշտանոցի հայ եւ օտար ուսանողներին՝ յորդորելով կատարելագործել իրենց ազգային երաժշտութեան ժառանգութիւնը, ու սիրում էր ասել, - իմ երկրորդ կոնսերվատորիան Հայաստանի երաժշտութիւնն է:

1925-26 թ.թ. կոմպոզիտորը աշխատել է Մոսկուայի հայկական դպրոցում ու առաջին անգամ գիտակցութեան է եկել, որ իր կոնցերտը Հայ Մշակութիւնի ծառայելին է: Այդ դպրոցում էլ լսեց, իմացաւ Կոմիտասի մասին: Յետագայում, Կոմիտասի հանճարին ծանօթանալուց յետոյ, Խաչատուրեանը պիտի գրէր.

«Նա ինձ հիացնում է իր ազգային ոճի մաքրութեամբ եւ ողջախոհութեամբ: Նրա երաժշտութիւնը ինձ յիշեցնում է մաքուր երիտասարդ կեզի կամ՝ դեռատի աղջնակ»:

Կոմիտասի հանդէպ տածած պաշտամունքը 1960 թուականին Խաչատուրեանին տարաւ Փարիզ, ուր բնակուած էր Կոմիտասի հինգ լաւագոյն երգչուհիներից մէկը՝ ժամանակին քիչ թէ շատ յայտնի երգչուհի Մարգարիտ Բաբայանի բնակարանը, որն ամբողջովին շնչում էր Կոմիտասով: Նստասենեակի չորս պատերը ողողուած էին Կոմիտասի նկարներով, որոնցից

Եկեղեցատր Եւ Ազգատր Հայր՝ Նազարէթ Գեւորեան

ՊԵՐՏ ԶՈՒԱՔԵԱՆ

Գերաշնորհ սրբազան հայրեր, արժանապատիւ հոգեւոր հայրեր, հարազատներ եւ սգակից բարեկամներ:

Խոր ցաւով իմացալ Նազարէթ Գեւորեանի մահուան ցնցիչ գոյժը:

Ուշ գիշերուան մը լուսթեան մէջ, տրտում զգացումով մը, կը փորձէի թուղթին յանձնել անցեալի մտորումներս՝ աւելի քան 35 տարիներու վրայ երկարող բարեկամութիւնս, թէ՛ ընկերային, թէ՛ աշխատանքային բնագաւառներու մէջ, ինչ որ թոյլ կու տան հարազատորէն ու հակիրճ կերպով արտայայտելու Նազարէթին յատկանիշներուն, համոզումներուն եւ հայրենասիրութեան մասին:

Ան բուն հաւատացողն էր ընկերային, ազգային եւ մարդկային արժէքներու: Յարատեւող եւ ստեղծագործ նկարագրի տէր անձն էր: Ունէր դրական կեցուածք կեանքի դժուարութիւնները յաղթահարելու նկատմամբ՝ իր կամքի դրսեւորած ոյժին ապահովելով: Ընկերասէր էր, հաստատամիտ եւ սկզբունքային համոզումներով կը կառչէր իր որոշումներուն: Լայնասիրտ ու համբերատար, մարդասէր եւ ազգասէր անձ մը, նուիրեալ ՀԱՅ մը:

Առատաձեռն էր իր նուիրատուութիւններուն ընթացքին եւ անսակարկօրէն նեցուկ կը կանգնէր բոլոր հայկական կազմակերպութիւններուն՝ անխտիր:

Հաւասարակշռուած ու նրբանկատ մտեցումով կը կշռադատէր իր բոլոր որոշումները՝ մօտիկ բարեկամներու հետ, իր վերջնական համոզումը ունենալու համար: Ունկնդրելով, ապա շօշափելի փաստերու վրայ հիմնուելով՝ կ'արժեւորէր իր համեստ համոզումը:

Այս էր իր ընդհանուր վարքագիծը:

Կը ձայնակցէր բոլոր մտահոգութիւններուն, անտարբեր եւ ձեռնածալ չէր մնար ու կը փորձէր իր անմիջական օգնութիւնը նուիրել բոլոր անոնց, ովքեր պէտք ունէին անհրաժեշտ ու անմիջական նպաստի:

Ասպնջական ոգիով անած, յաճախ այդ ցուցաբերած էր իր բարեկամներուն:

Կեանքի փորձառութիւնը մեծ դերակատարութիւն ունեցաւ իր հոգեկան եւ մտային պաշարը եւ ընկերային շրջանակը հարստացնելու գործին մէջ:

Եղած է բուն հայրենասէր մը եւ միասնականութեան ջատագով մը:

»Երկիր եւ Մշակույթ« կազմակերպութեան հիմնադիր եւ աշխոյժ անդամներէն էր: Անվերապա-



հօրէն կը սատարէր քալիֆորնիահայ գրեթէ բոլոր լրատուամիջոցներուն, հաւատարմ մամուլի անհրաժեշտութեան եւ դրական դերին:

Վերջին շրջանին, ի մասնաւորի կիրակի երեկոները, Նազարէթին տունը կը վերածուէր հանդիպման կայանի մը՝ հարազատներու, բարեկամներու եւ մօտիկ ընկերներու համար, զրուցելու եւ զաղափարներ փոխանակելու օրուան հրատապ եւ կենսական հարցերուն շուրջ:

Ոչինչ կը խնայէր իր զաւակներուն մէջ սերմանելու ազգային գիտակցութեան ոգին, հայրենասիրութիւնը եւ հայերէնի կարեւորութիւնը:

Ափսոս, Նազարէթ հրաժեշտ տուաւ այս աշխարհին, խոր վիշտ պատճառելով իր հարազատներուն, բարեկամներուն եւ անմիջական շրջապատին:

Մեծ է Նազարէթը կորսնցնելու վիշտը եւ դժուար սիոփելի: Կորսնցուցինք ազգասէր, կարեկցող եւ ընկերասէր անձ մը եւ անտարակոյս՝ բացակայութիւնը այնքան զգալի պիտի ըլլայ յետագայ օրերուն:

Սփիւռքահայութեան պարտէզէն շիջեցաւ պտղատու ծառ մըն ալ եւս:

Նազարէթ պիտի մնայ փայփայլուած յիշատակ մը մեր հոգիներուն ու միտքերուն թանգարանին մէջ:

Կարօտով զինք պիտի փնտռենք ու յիշենք:

Անպառ մխիթարութիւն եւ սիոփանք ընտանեկան պարագաներուն եւ բոլորին:

Թող իր ոգին հանգիստ սաւառնի յաւերժական խաղաղութեան մէջ:

Բիւր յարգանք եւ յաւիտենական հանգիստ հոգիին:

Յիշատակդ անթաւամ, անզին բարեկամ.

Սրտակից կրտսեր բարեկամդ՝ ՊԵՐՏ ԶՈՒԱՔԵԱՆ

Արեւմտեան Թեմի Բարեսիրական Ծրագրերից Մէկը. «Արեւ-Երեխաներ»



Արեւմտեան Թեմի հովանաւորութեան տակ գտնուող բարեսիրական տանեակ ծրագրերից մէկն է երեխաների առողջութեան եւ զարգացման «ԱՐԵՒ - ԵՐԵՒՅԱՆԵՐ» կենտրոնը:

Կենտրոնը հիմնադրուել է Հայաստանում, 2018 թուականին՝ նպատակ ունենալով աջակից լինել Դաւոնի համախառնիշով (ԴՀ) երեխաներին եւ նրանց ընտանիքներին: Հայաստանի տարբեր շրջաններից հաւաքուել են այդպիսի խնդիրներ ունեցող ընտանիքներ եւ բազմաթիւ կրթական, քարոզչական ծրագրեր մշակել՝ օժանդակելու նրանց:

Որպէս առաջնային առաքելութիւն՝ կենտրոնը մատուցում է առողջապահական ծառայութիւններ այն երեխաներին, որոնց հա-

1546729862394855/), որ պատրաստուել է Արեւմտեան Թեմ կատարած Տէր Գրիգորի այցելութիւնների ընթացքում, որտեղ հոգեւոր հովիւը մանրամասն պատմում է կենտրոնի ստեղծման նախապատմութիւնն ու առաքելութիւնը եւ նշում. «Մեր աշխատանքով ցոյց ենք տալիս եւ ապացուցում, որ այդ երեխաները կարող են աւելին, քան մարդիկ կարծում են: Տայ Աստուած, որ ոչ մէկն այս խնդիրը չունենայ, բայց եթէ նման առիթ լինի, ընտանիքները եւ բոլորը պիտի իմանան, որ այս երեխաները Աստուծոյ գառնուկներն են եւ չհեռացնեն իրենցից...»: Որպէս գործունէութեան հիմք կենտրոնը որդեգրել է հետեւեալ միտքը՝ «Արեւ երեխաները կարեւոր առաքելութիւն ունեն. նրանք հոգիները մաք-



մար դժուար կամ անմատչելի են, սակայն կենսականօրէն անհրաժեշտ են այդ ծառայութիւնները: Խօսքը յատկապէս յատուկ կառուցներում ապրող երեխաների, ինչպէս նաեւ սոցիալապէս անապահով ու խոցելի ընտանիքների երեխաների մասին է: Մատուցուող ծառայութիւնները բազմաթիւ են՝ սոցիալ-հոգեբանական, կրթական, քարոզչական: Ի մասնաւորի կրթական ծրագրերից են՝ մարդկանց տեղեկացնել ԴՀ-ի առանձնապատկութիւնների մասին, նուազեցնելու համար խտրականութիւնը այս երեխաների/մարդկանց նկատմամբ եւ իրենց հանդէպ հոգատարութիւն սերմանել:

Կենտրոնի ստեղծման հարցում մեծ դեր է ունեցել փոքրիկ Մոնթէի ծնունդը, որի հետ կապուած սրտաուռ պատմութիւնը ներկայացնում է Կազմակերպութեան հիմնադիր եւ նախագահ եւ Երեւանի Սբ. Զօրաւոր Աստուածածին Եկեղեցու հոգեւոր հովիւ՝ Արժ. Տէր Գրիգոր ԲՆ. Գրիգորեանը: Ցանկացողները կարող են այդ մանրամասները ունկնդրել Արեւմտեան Թեմի մեդիա բաժնի տեսանիւթի մէջ (<https://www.facebook.com/westerndiocese/videos/>

րող տեսակ են»: Իր խօսքում Տէր Գրիգորը նաեւ շեշտում է կենտրոնի գործունէութեան մէջ Առաջնորդ Սրբազանի ունեցած դերակատարութիւնը. «Տպաւորուած եմ Յովնան Սրբազանի քայլերից եւ այն հարաւորութիւնից, որ ընձեռնեց իր տիրախնամ թեմում՝ գործելու ազատ ու անկաշկանդ: Մասում եմ բոլոր Արեւ-Երեխաների եւ ծնողների անունից»:

Այս ծրագրի հովանաւորութիւնն է, որ յանձն է առել Արեւմտեան Թեմը Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի գլխաւորութեամբ: Այս պահի դրութեամբ հաւաքագրուած եւ արդէն կենտրոնին է փոխանցուած մեծագումար հանգանակութիւն, որի շնորհիւ հնարաւոր է ապահովել ԱՐԵՒ-ԵՐԵՒՅԱՆԵՐ ծրագրի շարունակականութիւնը, կազմակերպել դասընթացներն ու միւս ծրագրերը: Հովանաւորութիւնը նախատեսուած է նաեւ յառաջիկայի համար: «Մանուկներու հոգիներուն մէջ դրուած սէրը ազգի ու հայրենիքին հանդէպ անկողողպտելի է: Մեր քայլերը պիտի ուղղորդենք, որպէսզի չըլլայ այնպէս, որ մանուկները պարպուած մնան Աստուծոյ խօսքէն» (Յովնան Արք. Տէրտէրեան):

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈՒՁԱՅՆԵԼ (626) 797-7680

Նուիրատուութիւն

Ողբացեալ ժիրայր Գանիէլեանի յիշատակին տեղի ունեցած Ոգեկոչումին առթիւ՝ 30 Ապրիլ, 2023-ին, եղած են նուիրատուութիւններ, յետ ցանկի հրատարակութեան:

Ստորեւ, յաւելեալ ցանկը՝ այդ նուիրատուութեանց:	
Տիրար Յարութ Պրոնոգեան	\$2,000
Տոբթ. Չաւէն Արսլանեան	\$250
Տիկին Մարիա Քրիսեան	\$100
Տիրար Պետրոս Անսրլեան	\$100
Նոր Վերնատուն Մշակութային Միութիւն	\$100
Շնորհակալութիւն բոլոր նուիրատուներուն:	
ՀԲԸՄ-ի Լոս Անձելըսի Վեթերաններու Յանձնախումբ	

Նափոլիի Հայկական Ս. Գրիգոր Լուսաւորիչ

Շարունակուած էջ 12-էն

Այնտեղ՝ խորանին վրայ, պատկերուած է հայոց մեծ սուրբը մեծղի գիրք մը կարդալու ընթացքին, մինչդեռ կողքի նկարները՝ մին Տրդատ Գ. թագաւորն է վարագրի կերպարանքով եւ թախանձաւոր դիրքով, իսկ միւս կողմը նորէն Ս. Գրիգորն է՝ պատկերուած գինք «Artetax» լիճը նետելու տեսարանով: Սոյն նկարներուն հեղինակը նափոլիցի ակաւաւոր նկարիչ Francesco Fracanzano (16121656) է, որուն անդրանիկ ստեղծագործութիւններէն են այս եկեղեցիին մէջ պահպանուած Ս. Գրիգոր Լուսաւորիչին վերաբերող նկարները: Թերեւս թիւրիմացութիւն մըն է վերեւի նշումը, թէ սուրբը նետուած ըլլալ «Artetax» լիճը: Կը թուի, թէ Տրդատ թագաւորի եւ հայոց արքունի ալրերուն մկրտութեան պատմութենէն հատուած մըն է ներկայացուածը՝ Նպատ լեռան ստորոտը, Արածանի գետի ակունքներուն մօտ:

Այստեղ առանձնապէս յիշատակութեան արժանի է եկեղեցւոյ հսկայ նաւը ծածկող փայտէ ոսկեզօծ ձեղունը, որ ինքնին արուեստի գլուխգործոց մըն է՝ զարդարուած նափոլիցի վարպետներու փորագրութիւններով 15801582 թուականներուն ընթացքին, ուր կեդրոնական դիրքով գետեղուած են չորս իրարաջաշորդ նկարներ, որոնք ստեղծագործութիւններն են Ֆլամանցի (Պելճիքա) գեղանկարիչ Teodoro d'Erricoի (1542/441618): Չուստի շրջանակներու մէջ առնուած այդ նկարներէն, եկեղեցւոյ մուտքէն դիտուած, երրորդը կրկին կը ներկայացնէ Ս. Գրիգոր Լուսաւորիչը, որուն առջեւ ծնրադիր եւ բարեպաշտ դիրքով հանդէս կու գան Տրդատ Գ. թագաւորը եւ Աշխէն թագուհին»:

Անդրադառնալով Նափոլիի հայկական Ս. Գրիգոր Լուսաւորիչ հոյակերտ եկեղեցիին՝ ի գուր չէ, որ իտալացի հեղինակ մը՝ Չելանօ, ըսած է. «Երկրի վրայ դրախտէն կտոր մը»: Արդարեւ վայր մը, ուր երբ ներս կը մտնես, սրբութեան մը զգացումով ներշնչուելու, կեանքի աւորեալ հեքէն թեթեւալու, ներսիդիդ ծանրաբեռնուած խիղճդ հանդարտեցնելու եւ, ամենակարեւորը, մեղքերէ սրբուելու տպաւորութիւնը կ'ունենաս: Ակամայ կը սկսիս աղօթել եւ դիմել Տիրոջը իր անսահման ողորմածութեան համար: Եթէ երբեք թէկուզ պահ մը անկեղծ գտնուիս անձիդ հետ եւ խոստովանիս, թէ նոյնիսկ աղօթել չես գիտեր, ապա ձեռով մը արդէն իսկ աղօթած ու հեղ մը եւս մօտեցած կ'ըլլաս Աստուծոյ:

Երբեք չէի սպրած պահ մը, որ օտար երկրի մը երկինքին տակ պատմութիւնը հայոց իր հեռաւոր անցեալով այսքան անընդմիջելիօրէն գիտակցութեանս մէջ պիտի

դառնայ ներկայ: Հայոց փառահեղ անցեալի հզօր դէմքերը պիտի տողանցէին երեւակայութեանս մէջ այնքան հարազատօրէն ու ջերմացնէին սիրտս Ս. Գրիգոր Պարթեւի լուսապսակ ներկայութեամբ, Տրդատ Գ. Արշակունիի յաղթապանծ իշխանութեամբ, Աշխէն թագուհիի օրինակելի առաքինուղուխտի ճշմարիտ սրբակրօնութեամբ:

Յիրաւի՛, արդար է պարծանքը հայութեան, որ ըլլալով փոքրածու մը հզօր ազգերու ընտանիքին մէջ՝ առաջինը հանդիսացած է ճիշդ գնահատելու ժամանակին հրամայականը եւ ունեցած է հեռատեսութիւնը՝ հռչակելով քրիստոնէութիւնը հայոց աշխարհի պետական կրօն: Բայց այդ ժամանակ մեծ երկիր մըն էր Հայաստան եւ ունէր կայացած պետականութիւն, նաեւ հզօր բանակ՝ Սասնեան արքունիքի խարդաւանքներուն դիմակայելու եւ հռոմէացիներու կայսերապաշտական նուճողականութեան դէմ առձակատելու կամ համապատասխան ուղղափառական դաշինքներ կնքելու համար:

Բայց, աւանդ, աւերակ առ աւերակ կործանեցան անոր շէն ու շքեղ քաղաքները եւ վաչկատուն արնախումբ ցեղեր իրենց յորդանելով թաւեցան Նախիբեան մեր երկրին վրայ: Ինչէր եւ ինչ մշակութային աւանդներ չունեցաւ հայրօտար երկինքներու տակ, թէկուզ իր բնօրրանէն դուրս, անոնց քաղաքակրթութեան գանձարանին խառնելով իր ցեղին բարձրագոյն արժանիքները: Եւ դարձեալ, հակառակ իր թափած ծով արիւնին, արցունքին ու կրած ցաւին, ան մարդուն դէմ երբեք չդառնացաւ, չանիծեց իր դժխեմ ձակատագիրը եւ պատմութեան մէջ չչարացաւ, այլ առաւել եւս վերապրելու, տոկալու, յարատեւելու եւ համբերելու յոյսով զօրացաւ: Ան իր բնատուր եւ ոսկի սէրը ասելութեան ժանգ պղինձով չփոխեց, այլ մնաց տոկուն իր կրանիտեայ հաւատքով դէպի յաղթանակը բարիին:

Հետեւաբար իւրաքանչիւր հայ, աշխարհի ո՛ր անկիւնն ալ գտնուի եւ մեծաթիւ ո՛ր ժողովուրդին ու ժամանակակից գերիշխող մշակոյթներուն մէջ ալ բնակի, պէտք է հպարտ զգայ, որ ան արժանաւոր գաւակն է աստուածաշնչական Թորգոմեան ցեղին, ազատատենչ Հայկ նահապետին, ալեհեր եւ ստեղծագործ այն ժողովուրդին, որ չէ եղած բնաւ քանքաւրաթաքոյց ազգ մը եսասէր, այլ՝ քաղաքակիրթ եւ միանշանակ քաղաքակրթող, ունի պատմութիւն եւ բազմադարեան մշակոյթ, գիր ու գրականութիւն, եզակի ինքնութիւն, բնածին ու տոհմիկ քարութիւն եւ ծով մարդասիրութիւն:

Ուրկէ հայն է անցած, ոչ թէ իր ետին մահ ու աւեր սպռած է, այլ

Արամ Խաչատուրեանի Հայրենասիրութիւնը

Շարունակուած էջ 13

մէկը հրաժեշտի պահին երգչուհին նուիրել է կոմպոզիտորին:

Մինչ «Սպարտակ» բալետի վրայ աշխատելը, 1950-ին Արամ Խաչատուրեանը այցելում է Հռոմ: Լինում է Կոլիզէումում, ուր մեր թուարկութիւնից առաջ տեղի են ունեցել գերեզարուած ստրուկների միմեանց վայրագաբար սպանելու «թատերական ներկայացումները»: Կոմպոզիտորը եղել է նաեւ Վատիկանում, այցելել Հռոմի Պապին, որի պատճառով աւելորդ խօսակցութիւնների դուռ է բացուել իշխանութիւններ մօտ: Արամ Խաչատուրեանը քաջաբար դիմագրաւել է այդ կապակցութեամբ իր դէմ սկսուող հալածանքին ու մամուլով արել է հետեւեալ յայտարարութիւնը.

- Ես Աթեիստ եմ, բայց ես Հայ ժողովրդի գաւակն եմ, ովքեր առաջինն են եղել, որ ընդունել են Քրիստոնէութիւնը: Այսպիսով, Վատիկան զնալը իմ պարտքն էր:

Ահա թէ ինչ է գրում հայրենասէր, հոգու կարոտ բանաստեղծ Համօ Սահեանը Արամ Խաչատուրեանի մասին.

- Արամ Խաչատուրեանը Մեծերի հետ չափուելու խորհուրդը եղաւ փոքրաթիւ մեր ժողովրդի... դարձաւ քաղաքակրթութեան մեր վկայականը:

Մեր հայրենակից կոմպոզիտոր իզուարդ Միրզոյեանը, որ երկար տարիներ ղեկավարել է Հայաստանի կոմպոզիտորների Միութիւնը եւ եղել Խաչատուրեանի ուսանողը Մուկուլայի կոնսերվատորիայում ուսանած տարիներին, այսպէս է արժեւորում իր մեծ ուսուցչին.

- Խաչատուրեանի ստեղծագործական աշխատանքը իր մէջ է ներառել հայկական ժողովրդական երաժշտութեան մի յսկայական շերտ: Դրա ելեւէջներից շառերը նա այնքան խորն է ընկալել եւ վերամարմնաւորել, որ դրանք, ընկալուած են որպէս խաչատուրեան

նական:

Ըստ երաժշտագէտ Զէյնա Բաքատի՝ «այն, ինչը Խաչատուրեանին առանձնացրել է խորհրդային միւս կոմպոզիտորներից, ազգային հայկական վոկալային (երգչային) եւ գործիքային ժամանակակից մտածողութիւնն է»:

Կուբացի երաժշտագէտ Զէ Գեւարան հետեւեալ տողերով է արժեւորել Արամ Խաչատուրեանին.

- Արամ Խաչատուրեանի երաժշտութիւնը անմահ է, այն իր մէջ կրում է հայ ազգի ոգին, պայքարի եւ յաղթանակի ոգին: Խաչատուրեանն ունի միանգամայն ճանաչելի ոճ, որ երբեք չես շփոթի ուրիշի հետ:

ԱՅՆ ԳԵԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ ՈՒ ԿԱՐԾԻՔՆԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Արամ Խաչատուրեանը այն կոմպոզիտորն էր, ում անունով աշխարհը եւս մէկ անգամ պէտք է հիանար տաղանդաւոր ու բազմաշնորհ հայ ազգով:

Ժամանակակիցների բնորոշմամբ, կոմպոզիտորի բնաւորութեան յատկանիշներով կարելի էր ճանաչել մի ամբողջ ազգի: Նա հայ էր իր բոլոր դրսեւորումներով, սրտի թրթիւղով, մտքի թռիչքով: Նրա ձեռքի տակ հայերէն էին հնչում նոյնիսկ նոտաները:

Համաշխարհային դասական երաժշտութեան գանձարանի վերին շարքում է Արամ Խաչատուրեանի երաժշտութիւնը:

Ի տարբերութիւն Պրոկոֆեւի եւ Շոստակովիչի, Խաչատուրեանը եղել է խորհրդային երաժշտութեան եւ պարի հիմնադիրը:

Հայ երգահան-կոմպոզիտորներից Արամ Խաչատուրեանը միակն է, որ հասել է համաշխարհային ճանաչման: Երկրորդը, թէրեւս Առնօ Բաբաջանեանն է:

Յաջորդիւ՝ «Երեսուն տարի չլուծուող Համազգային հարց» (Արամ Խաչատուրեանի Հայաստանի Հիմնը)

բաշխած է կեանք եւ աւելիով կեանք: Ան եղած է անսահման երախտապարտ հանդէպ այն ժողովուրդներուն, որոնք հիւրընկալած են գինք, ուստի չէ զլացած անոնց մշակոյթի գանձարանին մէջ իր ամբողջ մտքովը, սրտովն ու հոլութեամբը ներդնելու այն բոլոր նիւթաբարոյական արժանիքները զորս ունի: Վկայ հայոց Ս. Գրիգոր

Լուսաւորիչ եկեղեցին, որ Նափոլիի սրտին մէջ 13 երկար դարերէ ի վեր է ու կը մնայ ըլլալ իբրեւ գործուն, աստուածային եւ կենսաբաշխ գորութիւն մը, արժանաւոր ընդունարան եւ միաժամանակ վկայարան մը քրիստոնէական հաւատքի ճշմարիտ կեանքին, որուն կենսական ուժը անսպառ է ու յաւիտենական:

Համապատասխան

ՆԱՅԻՐԻ

Առջաջին - Գրասխան

ԾԱՆՈՒ Է

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ-Ի

1958 - 1975 թուականներու

Լրիւ Լաթակազմ Հաւաքածոները

Ցանկացողներէն կը խնդրուի հեռաձայնել հետեւեալ թիւին

626-354-5924

ԵՆ. Էլմիրա Կարապետեանը եւ Բենիկ Խլղաթեանը՝ Արծաթե Մետալակիրներ



Էլմիրա Կարապետեանը եւ Բենիկ Խլղաթեանը Եւրոպական խաղերու խմբային պայքարին նուաճեցին արծաթե մետալներ:

Լեհաստանի Վրոցլա քաղաքին մէջ կատարուող հրաձգութեան մրցաշարին Բենիկ Խլղաթեան - Էլմիրա Կարապետեան զոյգը 10 մեթր օդամղիչ տորճանակ խառն մրցաձեւին մէջ զրաւեցին երկրորդ տեղը: Անոնք զրանցեցին նաեւ Եւրոպական խաղերու մրցանիշ 581 կէտ արդիւնքով:

Յիշեցնենք, որ Յունիսի 22-ին Էլմիրա Կարապետեանն ու Բենիկ Խլղաթեանը նոյն մրցաձեւի անհատական պայքարի ընթացքին չէին յաղթահարած որակաւորման փուլի արգելքը:

ԵՆ. Անիթա Մակեանը՝ Պրոնգե Մետալակիր

Անիթա Մակեանը պրոնգե մետալ նուաճած է Լեհաստանի մէջ կատարուող Եւրոպական խաղերուն: Յունիսի 23-ին Լեհաստանի Բելսկո-Բիալա քաղաքին մէջ մեկնարկած քարաթէի մրցաշարին Հայաստանի միակ ներկայացուցիչ, մինչեւ 68 քկ ծանրութեան մէջ Մակեանը երկու յաղթանակ տանելէ յետոյ կիսաեզրափակիչին 0:4 արդիւնքով պարտուած է զուգեցերիայի ներկայացուցիչ Ելենա Նորինային եւ դարձած է պրոնգե մետալակիր:



Հայաստան առաջին անգամ է որ Եւրոպական խաղերուն մետալակիր կ'ունենայ քարաթէի մէջ:

«Կրասնոտարը» Սպերցեանի Տեղափոխումէն Կ'ակնկալէ 18 Միլիոն Եւրո

Ռուսական «Կրասնոտարը» Հայաստանի հավաքականի 23-ամեայ կիսապաշտպան Խոսրոս Սպերցեանի տեղափոխումէն կ'ակնկալէ 18 միլիոն եւրո, կը հաղորդէ SportItalia-ն:



Transfermarkt-ը էտուարտ Սպերցեանի փոխադրման արժէքը կը գնահատէ 12 միլիոն եւրո:

Անոր ձեռք ձգելու ցանկութիւն ունի Ամստրտամի «Այաքսը»: Սպերցեանի ծառայութիւններով հետաքրքրուած են նաեւ իտալական «Սասուոլոն» ու «Ֆիորենթինան», գերմանական «Պորուսիա Մյոնչնկլատպախը»:

Աւարտած ակումբային մրցաշրջանին Սպերցեանը մասնակցած է 41 հանդիպման, նշանակած է 14 կոլ, կատարած է 14 կոլային փոխանցում:

«Միլան» Կը Փափաքի Չեռք Չգել Լուքաքուիին

Իտալական «Միլանը» հետաքրքրուած է Լոնտոնի «Չելսիի» պելճիկացի յարձակող Ռոմեո Լուքաքուով: Աւարտած մրցաշրջանին Լուքաքուն վարձակալութեամբ կը խաղար Միլանի «Ինթեր» խումբէն:

Ոչ պաշտօնական տուեալներով՝ «Միլան» անգլիական «Նիւքասլին» վաճառած է իտալացի կիսապաշտպան Սանտո Տօնալիի փոխադրումը՝ ստանալով 70-80 միլիոն եւրո: «Չելսին» պատրաստ է Լուքաքուի փոխադրումը «Միլանին» վաճառել 40 միլիոն եւրոյով:

Իտալիոյ աւարտած առաջնութեան Լուքաքուն «Ինթերի» հետ մասնակցած է 25 հանդիպման, նշանակած է 10 կոլ, կատարած է 6 կոլային փոխանցում:

Մեսին Կը Շարունակէ Գլխաւորել «Ոսկէ Գնդակի» Յաւակնորդներու Ցուցակը

Goal.com-ը հրապարակած է 2022-2023 թուականներու մրցաշրջանի արդիւնքով՝ աշխարհի լաւագոյն ֆութպոլիստի «Ոսկէ գնդակ» մրցանակի գլխաւոր չափանորդներու ցուցակը:



Առաջին տեղը կը մնայ աշխարհի ախոյեան Արժենթինի հաւաքականի 36-ամեայ յարձակող Լիոնել Մեսին, որ հեռացած է Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-էն եւ կը շարունակէ խաղալ ամերիկեան «Ինթեր Մայամի» խումբէն:

Goal.com-ի, «Ոսկէ գնդակի» չափանորդներն են.

1. Լիոնել Մեսի (ՊՍԺ / «Ինթեր Մայամի»)
2. Էրլինկ Հոլանտ («Մանչեսթըր Սիթի»)
3. Կիլիան Մփայէ (ՊՍԺ)
4. Վինիսիուս Ժուշիոր («Ռեալ Մատրիտ»)
5. Քեւին Դէ Պրուչէ («Մանչեսթըր Սիթի»)
6. Ռոտրի («Մանչեսթըր Սիթի»)
7. Իլկա Կիլանտիկ («Մանչեսթըր Սիթի» / «Պարսելոնա»)
8. Վիկտոր Օսիմէն («Նափոլի»)
9. Ռոբերտ Լեւանտովսկի («Պարսելոնա»)
10. Խուլիան Ալարեզ («Մանչեսթըր Սիթի»)

«Ռեալ» Յոյս Ունի Յաջորդ Ամիս Չեռք Չգել Սփապէին

Սպանիոյ փոխախոյեան Մատրիտի «Ռեալի» ղեկավարութիւնը զգալի առաջընթացի հասած է Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի եւ Ֆրանսայի հաւաքականի 24-ամեայ յարձակող Կիլիան Մփայէի փոխանցումը այս ամրան իրականացնելու գործընթացին մէջ, կը հաղորդէ սպանական Marca-ը:

Արքայական ակումբը յոյս ունի, որ յաջորդ ամիս ձեռք կը ձգեն Մփայէին, որ կրնայ իտալացի Կառլո Անչելոտիի գլխաւորած խումբի հետ մեկնիլ ԱՄՆ՝ շրջագայութեան:

«Ռեալ» Յունիսի 23-ին Լոս Անճելոսի մէջ պիտի խաղայ իտալական «Միլանի» հետ, Յունիսի 26-ին Հիւսթընի մէջ՝ անգլիական «Մանչեսթըր Եունայթեդի» հետ, Յունիսի 29-ին Տալասի մէջ՝ «Պարսելոնայի» հետ, Օգոստոսի 2-ին Օրլանտայի մէջ՝ իտալական «Եուվենտուսի» հետ:

Նեյմար. Անչելոտիի Ներկայութիւնը Պրագիլի Հաւաքականին Մէջ Շատ Կարելոր է

Ֆրանսայի ախոյեան ՊՍԺ-ի պրագիլի յարձակող Նեյմարը յոյս չաչտնած է, որ Մատրիտի «Ռեալի» իտալացի գլխաւոր մարզիչ Կառլո Անչելոտին կը գլխաւորէ Պրագիլի հաւաքականը:

«Ես գիտեմ, որ Անչելոտին մեր ազգային խումբերու ծրագրերուն մէջ է, նախագահը յոյս ունի անոր տեսնել Պրագիլի հաւաքականին մէջ: Ես, Վինիսիուսը, Միլիտանոն, միւսները եւս կը ցանկանք Անչելոտիի հետ աշխատիլ: Մենք անոր կը ճանչնանք, կը գիտակցինք անոր մեծութեան մասին», - Նեյմարի խօսքը կը մէջբերէ ֆրանսական L'equipe-ը:

Անչելոտիի պայմանագիրը «Ռեալի» հետ նախատեսուած է մինչեւ 2024թ. Յունիսը:



Championship Game HOMENMEN-Sahara vs Northeast LA FC

Sunday, July 9, 2023 9:55AM.
GRIFFITH PARK SOCCER FIELD;
3401 Riverside Drive, Los Angeles, CA 90027